№ 110 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 21

1908

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 2 № 110

ԵՐԵՍՈՒՆԵՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հինգշաբթի, մայիսի 22-ին
ՄՈՒՇՏԱՅԻԴԻ ԱՅԳՈՒՄ
կը կայանայ
●●●● ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ ●●●●
Գիւղերում աշխատող Թիֆլիսի Տնայնագործական Ընկերութեան օգտին
Վիճակախաղ-ալլեգրի, պլատ-շլվօ, պետրուշկա, էշերի վրա հեծնել, կարուսել:
ԵՐԿՈՒ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ
ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ տիկին Իվանիցկու
Վիճակախաղի իրերի մէջ կան բաւականաչափ արժէքաւոր իրեր, նաև 100 ռուբ. պետական բոնաս:
Զբօսանքի սկիզբն է ժամը 4-ին
Մուտքը մեծերի համար 30 կ., երեխաների և աշակերտների համար 15 կ.:
(ու.կ.ե.չ.հ.) աո. 4—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. Բաբայեանը
այս ամառ շարունակելու է ընդունել ներքին և ջղային հիւանդներ Կիսլովոդսկում և Էսսենտուկում, մայիսի 16-ից մինչև սեպտեմբերի 15-ը:
[չ. ու. կ.] ա. 12—10

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

III

Հայկական դպրոցները, որոնք բացվել էին 1874 թւի կանոնների զօրութեամբ, ունէին զանազան կազմակերպութիւն՝ նայած տեղին և նիւթական միջոցներին:

Մի տեղ հաստատված էին տարրական դպրոցներ մի քանի տարվայ դասընթացքով, միւս տեղ նրանք աւանդում էին այնպիսի հանրակրթական առարկաներ, ինչպէս են պատմութիւն, աշխարհագրութիւն, բուսաբանութիւն, կենդանաբանութիւն և այլն: Մի քանի դպրոցներում ուսումը այնքան ընդարձակ էր, որ պահանջվում էր նրա աւարտման համար 7—9 տարի ժամանակ: Օրինակ Ախալցխայի Եղիսաբէթեան և Կարապետեան դպրոցներում կրթութիւնը շարունակվում էր եօթ տարի, իսկ Թիֆլիսի Գայիանեան դպրոցում ինն տարի:

Այդ դպրոցներում դասաւանդող ուսուցիչների մի մասը լինում էր հոգևոր դպրոցներում աւարտածներից, մի մասը համալսարանականներից:

Հայ հասարակութիւնը սիրում էր այդ դպրոցները, տեսնելով նրանց մէջ այնպիսի կրթարաններ, որոնք տալիս են փոքր ի շատէ կլորացրած ուսում և դարձնում աշակերտներին այնքան հասուն և կրթված, որ նրանք այնուհետև կեանքի մէջ կարող են ինքնակրթութեամբ առաջ գնալ:

Այդ դպրոցներում աւարտած աշակերտուհիները միևնոյն ժամանակ կարողանում էին ստանձնել դաստիարակչուհիների պաշտօններ օրիորդական դպրոցներում և նոյնիսկ վարժուհիների պաշտօններ տարրական դպրոցների առաջին բաժանմունքներում:

Այդ տիպի դպրոցները գոյութիւն պահպանելով մինչև 1884 թւականը, փակվեցին միւս դպրոցների հետ, իսկ երբ վերաբացվեցին, նրանք կորցրել էին արդէն ընդարձակ ծրագրի իրանց արտօնութիւնները և կարող էին տալ միայն երկդասեան դպրոցի կրթութիւն հինգամեայ դասընթացքով:

Հայ հասարակութիւնը երբէք չէր մոռանում և միշտ յիշում էր անձկութեամբ իր նախկին դպրոցները և տենչում տեսնելու նրանց ժամանակով բացված առաջվայ ծրագրով և նախկին իրանց ճոխութեան հասած:

Եւ ահա, երբ 1905 թւին Բարձրագոյն հրովարտակը աւետեց հայ ժողովրդին, որ նրան վերադարձվել են դպրոցները 1874 թւի կանոններով, հայ հասարակութիւնը անկեղծ և խորապէս ուրախացաւ, տեսնելով իր տենչերի և իղձերի իրագործութեան ճանապարհը հարթված:

Եւ անշուշտ, նա այսօր էլ սպասում է, որ իր դպրոցները, աւելացնելով իւրաքանչիւր տարի նոր դասընթացքներ, նորից կը հասցնեն կրթութեան ծաւալը իրանց նախկին աստիճանին:

Ի հարկէ՝ դպրոցների մեծագոյն մասը, մանաւանդ գիւղերում, կը լինեն երկդասեան հասարակ դպրոցներ հինգ կամ վեց-ամեայ դասընթացքներով, բայց նրանք, որոնք գտնվում են մեծ գիւղերում և քաղաքներում և ունեն նիւթական փոքր ի շատէ բաւարար միջոցներ, կարող են ճոխացնել կրթական գործը, աւելացնել աւանդվող առարկաների թիւը և հասցնել ուսումը նախկին ծաւալին՝ եօթ-ութամեայ տևողութեամբ:

IV

Դպրոցական գործում ամենախոշոր դեր կատարող հանգամանքներից մէկը ուսման նախագիծ և ծրագիրներ կազմելն է: Այդ գործի ձեռնհասութիւնը վերապահված է եղել ամեն ժամանակ հայ հոգևորականութեան, որը իրագործել է նրան հմուտ մանկավարժական ոյժերի գործակցութեամբ: Նա աչքի առաջ է ունեցել մի կողմից եւրոպական մանկավարժութեան պահանջները և ցուցումները, իսկ միւս կողմից մեր դպրոցական կեանքի առանձնայատկութիւնները և այնու մշակել իր նախագիծը ու ծրագիրները:

Այդ տեսակէտով թանգ է եղել նրա համար և ձեռնարկների ընտրութեան գործը, որին նա վերաբերվել է շատ մեծ ուշադրութեամբ: Դպրոցական կեանքի փորձը ցոյց է տալիս, որ ուրիշ տեղերում կազմված ձեռնարկները յաճախ անյարմար են հանդիսացել իրականութեան մէջ: Այն օրինակները, որոնք բերված են ուրիշ տեղ կազմված ձեռնարկներում և այն երևոյթները, որոնք յիշատակված են նրանց մէջ, անմատչելի են եղել մեր դպրոցների սաների համար

Ահա ինչ պատճառով հայ դպրոցական կազմակերպութեան ղեկավարող մարմինը իրան է վերապահել դասագրքեր կազմելու և նրանց կիրառութեան մէջ մտցնելու ձեռնհասութիւնը:

Հոգևոր իշխանութիւնը, կանգնած լինելով դպրոցական մի ցանցի գլխին, անշուշտ, պէտք է ունենար գործակալներ, որոնք հսկէին դպրոցական ծրագիրների իրագործութեան վրա, և գործակից մարմիններ, որոնք խնամէին դպրոցական գործը:

Այդպիսի գործակալների դեր կատարել են հայկական դպրոցական կեանքում թեմական տեսուչները, որոնք ընտրվել են թէ հոգևորական և թէ աշխարհիկ անձերից: Նրանց մէջ եղել են զանազան աստիճանի կրթութեան անձեր, և ցանկութիւն է յայտնվել, որ նրանք ունենան պատրաստութիւն ոչ պակաս, քան պահանջվում է ուսուցիչների համար, իսկ եթէ հնարաւորութիւն կայ, հրաւիրվեն այդ պաշտօնի համար նաև անձեր համալսարանական կրթութիւն ստացածներից:

Գործակից մարմիններ հանդիսացել են ծխական հոգաբարձութիւնները, որոնք և իսկական տէրն են եղել դպրոցի, իրականացնելով իրանց կրթական պահանջները հոգևորականութեան՝ իբրև իրանց ներկայացուցչի՝ հետ միասին:

V

Հայ դպրոցները միշտ մի առանձին նշանակութիւն են տուել պետական լեզուին և ամեն ջանք գործ են դրել, որ այդ լեզուն իւրացվի կարելին չափ կատարեալ կերպով:

Պետական լեզուի կարևորութիւնը երբէք կասկածի չէ ենթարկվել և չէր էլ կարող ենթարկվել, որովհետև նա անհրաժեշտ է թէ ընդհանուր քաղաքացիական և թէ գործնական կեանքի պահանջի տեսակէտներով:

Բայց վէճ և տարբեր հայեացքներ յայտնվել են և այժմ էլ յայտնվում են այն կէտի առիթով, թէ երբ սկսվի պետական լեզուի ուսուցումը, արդեօք առաջին տարվանից թէ երկրորդ կամ երրորդ տարիներից:

Դա բուն մանկավարժական և գործնական յարմարութեան մի հարց է, որը և պէտք է լուծվի առանց կանխակալ կարծիքների, առանց անհիմն և անախորժ կասկածների:

Եւ եթէ հայ մանկավարժական աշխարհը հանում է պետական լեզուն առաջին տարվայ դասընթացքից և դնում է նրան երկրորդ տարվան կամ այդ տարվայ երկրորդ կիսին և կամ նոյնիսկ երրորդ տարվան, դա արդիւնք է միայն մանկավարժական որոշ հայեցակէտի, որը համոզված է այն բանի մէջ, թէ մանուկը նախապատրաստված և փոքր ինչ զարգացած լինելով մայրենի լեզուի մէջ, աւելի արագ և աջող կերպով կըմբռնէ պետական լեզուի ուսուցումը, տալով վերջնական եզրակացութեան մէջ աւելի արդիւնաւոր հետևանքներ պետական լեզուի իւրացման գործում:

Հայկական իրականութիւնը ճանաչել է պետական լեզուի առաջնակարգ նշանակութիւնը և դրել է նրան իր ծրագիրների մէջ նոյնիսկ Ռուսաստա[illegible] հայ դպրոցներում, օրինակ Պարսկաստանի մի քանի դպրոցներում, ինչպէս Թաւրիզում, Ռեշտում և այլն: Վէճը միայն այն բանի մէջ է եղել, թէ ինչպէս նպատակայարմար է դասաւանդել նրան արդիւնաւոր հետևանքներ ստանալու համար:

Փորձը և մանկավարժական ցուցումները աշխատել են ամենաանաչառ և լուրջ կերպով մօտենալ խնդրին, դուրս վանելով կողմնակի մտումներ և նկատումներ:

VI

Բարձրագոյն հրովարտակը, որ տրվեց 1905 թւի օգոստոսի 1-ին և որով վերականգնված են 1874 թւի կանոնները հայ դպրոցների վերաբերութեամբ, արտօնում է հայ հոգևորականութեանը լայնարձակ գործունէութիւն կրթական ասպարէզում:

Եւ անկասկած՝ եթէ այդ գործունէութեան համար հարթված կը լինեն ճանապարհները, հայկական դպրոցական կեանքը կարող կը լինի բեղմնաւոր և արդիւնաւոր գործ կատարել, իրագործելով երկու խոշոր նպատակ՝ մի կողմից բարձրացնելով հայ ժողովրդի կրթական աստիճանը, միւս կողմից օգնելով պետութեանը իրագործելու հանրային ժողովրդական կրթութեան տարածման այն մեծ ու ծանր պարտաւորութիւնը, որ նա դրել է իր առաջ՝ իբրև հերթական առաջնակարգ հարց:

Հայ ժողովուրդը միայն մի ցանկութիւն ունի—տեսնել դիւրացրած նրա համար կրթական գործունէութեան ճանապարհները: Այնուհետև նա չի խնայի ոչ իր կուլտուրական ոյժերը, ոչ իր նիւթական միջոցները՝ գործադրելու իր սիրած կրթական գործին:

Հարթել գործունէութեան ճանապարհները և հեռացնել խոչընդոտներն ու աննպաստ ազդեցութիւնները—ահա մեր առաջ դրված պարտաւորութիւնը:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պետերբուրգ, 18 մայիսի

Թագաւոր Կայսրի անգլիական թագաւորի հետ տեսնվելու ժամանակ ներկայ է լինելու մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինը: („К.")

—

Պետերբուրգ, 19 մայիսի

Հարցապնդումների դումայական մասնաժողովը Դումայի ընդհանուր ժողովին մի զեկուցագիր ներկայացրեց Կովկասի տերրօրիստական ակտերի մասին մինիստրների խորհրդի նախագահին ուղղած հարցապնդման առիթով: Մասնաժողովը որոշեց ընդունել հարցապնդումը միայն այն փոփոխութեամբ, որ նա պէտք է յանձնվի ոչ թէ մինիստրների խորհրդի նախագահին, այլ Կովկասի Փոխարքային: («Հ. Գ.»)

—

Ռուսաստանին սահմանակից թիւրքական շրջաններում եռանդուն գործունէութիւն է նկատվում: Զէնքի կանչված ռեդիֆները անընդհատ ուղարկվում են դէպի սահմանագլուխը: Քիւրդական հրամանատարները Միւշիւրաթից ամենայն օր հրամաններ են ստանում միշտ զինված ու պատրաստ լինել:

Ազգաբնակութիւնը, տեսնելով զօրքերի շարժումները, պատերազմը համարում է անխուսափելի:

Ռեդիֆները տաք հագուստներ չունեն և բաւականաչափ ուտեստներ ու մթերքներ չեն ստանում: Դրա շնորհիւ դժգոհութիւններն ու փախուստները անպակաս են:

Թիւրքիայի պատերազմական պատրաստութիւնների մասին շարունակվում են սենսացիօն լուրեր ստացվել: Եըլդըզ-Քեօշկի ռազմասէր դիպլոմատները ըստ երևոյթին փայփայում են բխանչի ցնորքները:

Տեղական լրագիրների ասելով, փադիշահի մինիստրների խորհրդի վերջին նիստում, որին ներկայ է եղել ինքը «ընդհանուր մահմեդականութեան» հրամայող Աբդուլ-Համիդը (յաղթողը), քննութեան է ենթարկվել նաւատորմի բարեփոխութեան և առհասարակ ամբողջ զօրքի [illegible] խնդիրը:

Զինւորական մինիստրը զօրքի դրութեան մասին տուած իր զեկուցման մէջ, ի միջի այլոց, պահանջել է Թիւրքիայի լիակատար պատերազմական պատրաստութեան համար էլի մի քանի նոր սիստեմի պաշարողական թնդանօթներ: Մինիստրի ասելով, Կրուպպի գործարաններից նոր ստացված թնդանօթները արդէն փորձի են ենթարկվել և փայլուն արդիւնքներ են տուել: Սակայն այդ նոր պատուէրի մի մասը ուղարկված է արդէն Մակեդոնիա, իսկ աւելի ուժեղը՝ Անատոլիա: Մի քանի ուրիշ բերդերի համար հարկաւոր են էլի մի քանի նոր թնդանօթներ, որովհետև նրանց ունեցած թնդանօթները հին ձևի են:

Այնուհետև զինւորական մինիստրը մատնանշել է, որ թիւրքական զօրքի մէջ գնդակացիրներ չը կան, որոնք, ինչպէս արդէն ռուս-ճապօնական փորձը ցոյց տուեց, մեծ օգնութիւն են հանդիսանում:

Այդ հարցը տաք վիճաբանութիւնների տեղիք է տուել, և վերջ ի վերջոյ վճռվել է թիւրքական զօրքի համար Գերմանիայում նոր տեսակի գնդակացիրներ պատուիրել...

Տեղական լրագիրների ասելով, այդ ժողովը տևել է մինչև ուշ գիշեր. այդտեղ, ի միջի այլոց, մշակվել է նաւատորմի բարենորոգութեան ծրագիրը և վճռվել է նոր թնդանօթներ պատուիրել Կրուպպի մօտ: Իբրև ծովային պետութիւն, Թիւրքիան, կայսրութեան ժամանակակից յայտնի պետական անձանց կարծիքով, չը պէտք է յետ մնայ իր հարևաններից, և անհրաժեշտ է ամեն ջանք գործ դնել եթէ ոչ բարձր կանգնելու, գոնէ հաւասար աստիճանի վրա կանգնած լինելու ուրիշ պետութիւնների համեմատութեամբ: («Р. Утро»)

—

Լօնդօն, 19 մայիսի

Ռէյթերին հաղորդում են Թէհրանից, որ Բամից ստացված տեղեկութիւնների համաձայն 700 լաւ զինված աւազակներ գրաւեցին Բեզանար, որ գտնվում է Քիրմանից 180 կիլոմէտր հեռաւորութեան վրա դէպի հարաւարևելք: («Հ. Գ.»)

—

Խաբարօվսկ, 19 մայիսի

Մայիսի 18-ի մըրրիկը շուռ տուեց Ամուրի վրա կանգնած բեռնակիր նաւերից մէկին: Խեղդվեցին 6 նաւաստիներ և 83 չինացիներ: («Հ. Գ.»)

—

Թաւրիզ, 19 մայիսի

Յորդառատ անձրևների պատճառով վարարված գետերը ծածկեցին դաշտերը և մեծ աւերածութիւններ գործեցին: («Հ. Գ.»)

—

Թաւրիզ, 19 մայիսի

Երկու աւտօմօբիլներով Կովկասից եկան գերմանացի ճանապարհորդներ, որոնք մտադրութիւն ունեն Թէհրան գնալ: («Հ. Գ.)

—

Բելգրադ, 19 մայիսի

Սկուպշչինայի ընտրութիւններին ընտրվեցին կառավարական թեկնածուներից 81-ը, 46 երիտասարդ արմատականներ, 16 նացիօնալիստներ, 8 առաջադիմականներ և մի սօցիալ-դեմօկրատ:

Բելգրադում ընտրվեցին ֆինանսների մինիստր Պաշիչը և երեք երիտասարդ արմատականներ: («Հ. Գ.»)

—

Նուխի, 19 մայիսի

Այսօր բացվեց Նուխու երկրորդ փոխադարձ վարկի ընկերութիւնը: Անդամների թիւն է 280, շրջանառութեան դրամագլուխը 120,000 րուբլի: Վարչութեան նախագահ Ահմէդով:

—

Ղօչան, 13 մայիսի

Ապրիլի 29-ին Թէհրանից այստեղ ժամանեց մեր նախկին դատաւոր Ծուղջա-Դովլէն: Նրա գալուց յետոյ ընակչութիւն գլուխ է բարձրացրել, անջումանականներին [illegible] պատել: մէջլիսի անունը կայ, ինքը չը կայ. [illegible] նակ, իսկ երբեմն օրերով փակված: [illegible]

Իրերի այսպիսի դրութեան մէջ հաւանական է, որ ընդմիշտ փակվի տեղիս անջումանը և տիրէ նախկին բռնակալական դաժան ռեժիմը:

Մկր. Գէորգեան

—

Լօնդօն, 13 մայիսի

Անգլիական կառավարութիւնը բացատրել է պարլամենտում ռուս-պարսկական ընդհարումների առիթով, որ պարսիկները խախտել են ռուսական սահմանը, որի շնորհիւ անհրաժեշտ եղաւ պատժիչ էքսպեդիցիա ուղարկելու և որ Ռուսաստանն այդ գործում մեծ չափաւորութիւն է ցոյց տուել:

Մամուլը ռուս-պարսկական սահմանագլխի վրա կատարված իրերի դրութիւնը համեմատում է աւղանօ-հնդկական սահմանագլխի իրերի դրութեան հետ և գտնում է, որ ռուսական էքսպեդիցիան, ինչպէս և անգլիականը, ծագել է սահմանագլխի անկարգութիւնների շնորհիւ: Նա գովում է Ռուսաստանի անկեղծութիւնը Պարսկաստանի անկախութիւնը ճանաչելու համար և նախազգուշացնում է վերջինիս ի չարը չը գործադրել Ռուսաստանի համբերութիւնը:

Քաղաքական շրջանները մեծ ուշադրութեամբ հետևում են Գերմանիայի ակներև գայրոյթին երեք բարեկամ պետութիւնների և պետերի այցելութեան առիթով:

Այդ գայրոյթը արտայայտվում է նրանով, որ գերմանական պաշտօնական թերթերը ագիտացիա են մղում գերմանական հասարակական կարծիքը գրգռելու Ֆրանսիայի քաղաքականութեան դէմ Մարոկկօյի վերաբերմամբ:

Գերմանական կառավարութիւնը կարծես թէ մանիֆեստացիա է որոնում, որը նրան դրդէր վճռական գործողութիւնների դիմելու: Այդ պաշտօնական օրգանները ձգտում են անգլիացիների մէջ անվստահութիւն զարթեցնել դէպի ռուսական քաղաքականութիւնը, հաւատացնելով որ իբր թէ կոմս Մուրավիէվը աշխատում էր մի համախմբում ստեղծել Անգլիայի դէմ անգլօ-բուրական պատերազմի ժամանակ և որպէս թէ Գերմանիան է միայն փրկել Անգլիային:

Անգլիացիները սառը կերպով նկատում են, որ այդ վկայութիւնները հակասում են հաստատուած փաստերին, և ցաւում են, որ գերմանացիները չեն հասկանում Ռուսաստանի ու Անգլիայի միջև գոյութիւն ունեցող և իրար հետ սերտ կերպով շաղկապուող շահերի խոշոր նշանակութիւնը: («Н. В.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Երկուշաբթի, մայիսի 19-ին, Թիֆլիսի քաղաքային դուման իր նիստի մէջ զբաղվեց դումայի նոր քարտուղարի ընտրութեան խնդրով, ի տեղի հրաժարված քարտուղար Սեմենովի: Թերթիկներով կանդիդատներ առաջարկվեցին պ. պ. Միքայէլ Զարար, որ ստացաւ 33 ձայն, և Սիմէօն Զաւարեան, որ ստացաւ միայն 17 ձայն: Երբ յայտնի եղաւ թերթիկների արդիւնքը, Զաւարեանի կանդիդատութիւնն առաջարկող մի քանի ձայնաւորներ առաջարկեցին ընդմիջումն անել, և թէև ձայնաւորներից շատերը նկատեցին, որ հարկ չը կայ ոչ մի ընդմիջումն անել, քանի որ նիստը նոր է սկսվել, բայց քաղաքագլուխ Չերքեզովը յայտարարեց 5 րոպէ ընդմիջումն: Այդ ընդմիջումը ծառայեց սաքթ կուսակցականների համար՝ եռանդուն ագիտացիա մղել յօգուտ Զաւարեանի և յորդորել մի քանի ձայնաւորների, որոնք թերթիկներով ձայն էին տուել միայն պ. Զարարին, ձայն տալ և պ. Զաւարեանին: Այնուամենայնիւ, չը նայելով այդ ագիտացիային, գաղտնի քուէարկութեամբ պ. Զարարը ստացաւ 33 սպիտակ և 26 սև ձայն, իսկ Զաւարեանը ստացաւ 32 սպիտակ և 27 սև ձայն: Քաղաքագլուխը յայտնեց, որ երկուսն էլ պէտք է ընտրված համարել, ուստի երկուսին էլ կառաջարկէ նահանգապետի հաստատութեան:

Այս դուման սկսեց քննել ուպրավայի զեկուցումը այն հողերի մասին, որ Անդրկովկասի երկաթուղու վարչութիւնը գրաւել է Թիֆլիսի կայարանի լայնացման համար: Մի երկար ճառով Ալ. Խատիսեան աշխատեց ապացուցանել ուպրավայի զեկուցումը, բայց ձայնաւոր Ս. Միրզոյեան մի մեծ և պատճառաբանեալ ճառով բացատրեց, որ Խատիսեանի առաջարկը այդ հողերի մասին միանգամայն վնասակար է քաղաքի շահերին, որ ուպրավան խորհրդակցութեան չէ հրաւիրել հողային յանձնաժողովը: Դուման որոշեց յետաձգել հարցի քննութիւնը, պատուիրել ուպրավային հրաւիրել խորհրդակցութեան հողային յանձնաժողովի բոլոր անդամներին և մասնագէտ ձայնաւորներին:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դաշուբլաղ (Նուխու գաւ.), 17 մայիսի

Մի շատ ուրախալի երեւոյթ է, որ ցանքերը այս տարի շատ լաւ են: Եթէ այս տարի նոյնը շարունակվէր, ինչ որ անցեալներում, պէտք է ժողովուրդը սովից ջուրը ընկնէր՝ խեղդվէր: Բայց թէ որքան ուրախալի [illegible] չենք կարող ասել, որովհետև դեռ ինչպիսի պատահարներ կարող են արտերի գլուխը գալ, այն է՝ մորեխ, կարկուտ, ցուրտ և այլն...

Եթէ վերջին պատահարներից արտերը զերծ մնան, յոյս ունենք, որ գիւղացիները կը կազդուրվեն և իրանց հին պարտքը յետ կը վճարեն:

Գարեգին Մէյրանեանց

Մերվ, 13 մայիսի

Մայիսի 11-ին տեղիս ծխական դպրոցի հոգաբարձութիւնը ժողովի էր հրաւիրել ծխականներին՝ քննելու դպրոցի արդի վիճակը և հոգալու անհրաժեշտ կարիքները: Ուսումնարանական տարին վերջացել է արդէն, բայց փող չը կայ, որպէսզի ուսուցիչների հասանելիք ռոճիկները տան և արձակեն: Փող չը կայ միևնոյն ժամանակ վճարելու ուսումնարանի կողմնակի պարտքերը: Իսկ չը կայ, որովհետև հոգաբարձութիւնը անկարող է հաւաքել անցեալ տարվայ ուսումնարանական տուրքերը, քանի որ միշտ մերժումներ է ստանում:

Արդ՝ ծխականների ժողովը պէտք է որոշէր, թէ ինչ միջոցների պէտք է դիմել տուրքերը հաւաքելու և բաւարարութիւն տալու թէ ուսուցիչներին և թէ կողմնակի պարտատէրերին:

Ծխականների ժողովը չը կայացաւ, որովհետև ներկայ գտնվողների թիւը քիչ էր, ուստի յետաձգվեց մի այլ անգամի:

Բանից առաջ մերվաբնակ պ. Յ. Աւետիսեանը առաջարկել էր տեղիս վաճառականներին թէ՝ «Մենք փողոցից փողոց ընկնելով, 1-ական և 2-ական րուբլիներ հաւաքելով՝ չենք կարող ուսումնարանը ապահովել. ես յարմար եմ տեսնում, որպէսզի ուսումնարանի տուրքը (4000 ր.) բաժանենք 10—15 ունեւորներիս մէջ ու տարէ-տարի վճարենք, այն ժամանակ ապահոված կը լինենք դպրոցը»: Բայց տեղիս վաճառականները պ. Աւետիսեանին լռեցրին, և նա էլ լռեց:

Այժմ սպասում ենք երկրորդ ժողովին. և մենք ստիպված ենք ցուցակագրելու բոլոր արհեստաւորներին, գործակատարներին և արաբաչիներին, որպէսզի նրանց վրա տուրքեր նշանակվեն:

Մենք լիայոյս ենք, որ գոնէ վերջինները կարդարացնեն մեր յոյսերը:

Մանասէ

Հին-Նախիջևան, 16 մայիսի

Այս մայիսի 13-ին քաղաքս ժամանեցին աւտոմոբիլով 5 գերմանացիներ, որոնք գնում էին Հնդկաստանի Կալկաթա քաղաքը Թաւրիզի և Թեհրանի վրայով: Այդ գերմանացիներն էին՝ Գրոֆ Րուդոլֆ Ցաբել և նրա կինը, Օտտո Գերլուխ՝ յայտնի նկարիչ Լայպցիգից, որ «Leipziger illustrierte zeitung» ի աշխատակիցն է, նկարիչ Օտտո Բուաշեկն՝ Դիւսսելդորֆ քաղաքից, մեքենագէտ Հանս Դրէքսէ Միւնխենից և մի գերմանացի պատանի, որին իբրև թարգման վերցրել էին իրանց հետ Թիֆլիսից, Ֆրանսերէնի և ռուսերէնի համար: Նրանք իրանց ճանապարհորդութիւնը սկսել էին Ֆրանկֆուրտ Մայն-վրա քաղաքից երկու ամիս առաջ, մարտի կիսին, անցել աւտոմոբիլով Աւստրիա, Ունգարիայով և Ռումինիայով, և եկել Օդեսսա, որտեղից Սև ծովով եկել էին Բաթում, իսկ այնտեղից դարձեալ աւտոմոբիլով շարունակել ճանապարհորդութիւնը մինչև Թիֆլիս, ուր մնացել էին չորս օր: Այդտեղից նրանք շարունակել էին ճանապարհը և եկել էին Նախիջևան, ուր մի ժամ մնացին միայն գնումներ անելու համար: Ամբողջ քաղաքի ժողովուրդը շրջապատել էր նրանց աւտոմոբիլները, որովհետև շատերը իրանց կեանքում չէին տեսել այդ ինքնաշարժ կառքը: Նրանք գրեթէ ոչ մի բառ ռուսերէն կամ թուրքերէն չը գիտէին, նոյնը և հայերէն: Նրանց համար դժուարութիւններ էին ներկայացրել սարահարթ գետերը և քարքարոտ գետերը, որոնց անցնելու համար յաճախ եղների օգնութեան էին դիմել: Նախիջևանի գետը չը կարողանալով անցնել, նրանք գիշերել էին գետի ափին. գաւառապետը նրանց և նրանց կառքերը պաշտպանելու համար գիշերը ուղարկել էր մի քանի ստրաժնիկներ: Միւս օրը առաւօտեան գերմանացի ճանապարհորդներից Օտտո Բուաշեկ նկարիչը մի փոքրիկ տարաձայնութիւն էր ունեցել գրոֆ Ցաբելի հետ և ձանձրացած 2 ամսվայ դժուարին ճանապարհորդութիւնից, որ Պարսկաստանում կրկնակի դժուարին պիտի լինէր, վերադարձաւ քաղաքս և միւս օրը՝ 15-ի առաւօտեան մեկնեց Թիֆլիս իր հայրենի Դիւսսելդորֆ քաղաքը դառնալու մտքով: Այսօր հեռագրատան մի պաշտօնեայից իմացայ, որ գերման ճանապարհորդները արդէն Թաւրիզից անցել են և մօտ են Ղազվինին:

Գիրօ

Նոր-Բայազէտ, 16 մայիսի

Ամսիս 11-ին տեղի ունեցաւ հայոց ծխական դպրոցի հոգաբարձութեան ընտրութիւնը: Առաջարկված 7 թեկնածուներից ձայներ ստացան—1) Խ. Բունիաթեանց, 2) Գ. Բուդաղեանց, 3) Հ. Տէր-Միքայէլեանց և 4) Ի. Արեշատեանց, իսկ անձնափոխանորդներ ընտրվեցին 1) Վ. Ցակորեանց և 2) Ա. Բոշարեանց: Ապրիլի 27-ին [illegible] ընտրութիւնը հայր Խորէնը անվաւեր ճանաչելով բեկանել էր, նշանակելով այս նոր ընտրութիւնը, որի հետևանքը եղաւ այն, որ հին հոգ. կազմից աւելացաւ միայն պ. Ի. Արեշատեանցը: Սակայն յիշելու ենք, որ վերջին ընտրութեանը մի խումբ երիտասարդներ, որոնց մեծամասնութիւնը հակված է դէպի սօցիալ-դեմօկրատական վարդապետութիւնը, որոնք 27-ի ժողովում մեծ ագիտացիա անելով ձիգ էին թափում իրանց կուսակցութեան անձանց անցկացնել, այս անգամ (11-ին) տեսնելով, որ ժող. մեծամասնութիւնը համակրանք ունի դէպի հին հոգաբարձութիւնը (կադետական կուսակցութիւնը), այդ պատճառով թողին ժողովը և հեռացան, երբ բօյկօտ յայտարարեցին ընտրութեան դէմ:

Հոգաբարձութեան պաշտօնը ստանձնելու երիտասարդ անձնաւորութիւններին մեզանից ոչ ոք դէմ չէ. սակայն այդ պատասխանատու պաշտօնը և ծանր պարտականութիւնը, մանաւանդ մեր քաղաքի ժողովրդի համար, անհրաժեշտ է յանձնել ձեռնհաս ժողովրդի սէրը և վստահութիւնը վայելող մարդկանց, մանաւանդ այս տարի, երբ արդէն առաջներս դրված է ուսումնարանի նոր շինութիւնը, որը ահագին նիւթական և տնտեսական աշխատանք է պահանջելու: Միւս կողմից դպրոցի ժամանակակից շահերը պահանջում են գործը յանձնել աւելի ձեռնհաս անձանց և այդ իսկ տեսակէտից հոգաբարձական այդ ընտրութիւնը աջող կարելի է համարել:

Ինչ վերաբերում է այն բանին, որ շատերը հաւատացրել էին ռամիկ դասակարգին, որ իբր թէ ներկայ հոգաբարձութիւնը, իբրև մի բուրժուա կազմակերպութիւն, պաշտպանում է հարուստների շահերը՝ թոշակը—ուսումնավարձը—հաւասար կերպով բաժանելով թէ հարուստի և թէ չքաւորի համար,—դա սխալ կարծիք էր. ինչպէս այդ երևաց հոգաբարձութեան մի անդամի բացատրութիւնից, որ նախ հարուստների զաւակներ քիչ կան հայոց ուսումնարանում, երկրորդ՝ 220 աշակերտներից 115-ը ձրի են սովորում, երբ չքաւորների երեխաներ, իսկ երրորդ՝ թոշակները 3—4 կատեգօրիաների բաժանելու սիստեմը մեծ անախորժութիւններ էր առաջ բերել նախկին տարիներում, երբ ըստ կարողութեան էին բաժանել, քանի որ 5—10 րուբլի տուողը նկատողութիւն էր անում հոգաբարձութեան. «Պարոններ, դուք իմ փողը համարե՞լ էք, որ իմ երեխային 5 կամ 10 րուբլի էք նշանակել, իսկ իմ հարևան այս ինչին՝ 2 ր.» և այլն: Եւ ահա, այդ անախորժութեան առաջն առնելու համար, հոգաբարձութիւնը բարւոք է գտել ուսման վարձը հաւասարաչափ կերպով նշանակել 6 ր., իսկ աւելի չքաւորներին՝ ձրի ընդունել: Բացի այդ, հարուստների վրա դրված է նաև պրօգրեսիւ տուրք առանձին կերպով, որից ազատ են դարձեալ չքաւորները, այն է՝ քաղ. վարչութիւնը տարեկան հարկերի և հաս. ծախսերի թւում ունի նաև 1000 ր. սուբսիդիա, որը ըստ կարողութեան հաւաքված է և օժանդակված դպրոցին, որտեղ հարուստին ընկնում է 10, 20, 30 րուբլի դպրոցական տուրք, իսկ չքաւորին և ոչ մի կոպէկ: Ապա ո՞ւր մնաց հարուստների շահերի պաշտպանելը:

Այժմ էլ, երբ արդէն հ. ուսումնարանի հիմքն են դցում, շատերը դարձեալ առարկում են, ի հարկէ մութ մարդկանցից, թէ ահագին փող ծախսելով ուսումնարան են շինում, որ հարուստների երեխաները գնան կարդալու: Մինչդեռ դպրոցը ընդարձակված է յատկապէս աղքատ դասի երեխաներին դասից չը թողնելու համար: Ապա թէ ո՞չ հոգաբարձութիւնը իր բիւջէն աւելացնելու և ծախսերը ծածկելու համար կարող էր ընդունել միմիայն հարուստ երեխաներին—բոլոր թոշակաւորներին, իսկ աղքատներին բացառապէս մերժել, յատկապէս տեղ չը լինելու պատրուակով: Այն ինչ, հակառակ «օպպօզիցիօն» կոչված կուսակցութեան ասարկութեան, մեր հոգաբարձութիւնը ցանկութիւն ունի ուսումնարանը ընդարձակել, որպէսզի ընդունէ աւելի թւով աղքատ երեխաներ՝ նոյնիսկ ձրիաբար, եթէ թոյլ տային նրա նիւթական միջոցները:

Այդ բոլորից յետոյ, թող ուրեմն մեր հոգաբարձութիւնը, արժէք չը տալով շատերի սաէ-կօսէներին, միշտ առած ժողովրդի համակրանքից, կրկնապատկէ իր եռանդը և աւելի թափով նետվի հասարակական գործունէութեան ասպարէզը, արդարացնելով գիտակից մասի յոյսերը, մանաւանդ ներկայ կրիտիքական րօպէում, երբ դպրոցի կառուցումը մի անհրաժեշտ և օրվայ պահանջ է դառնում:

***

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ *)

Մեր կեանքի հին հիմքերը խախտվել են, հասկացողութիւնները շփոթվել, ժողովրդի տնտեսական դրութիւնը քայքայվել և ընդհանուր [illegible] քաոս. թանձր ժամանակների յատկանիշներից մէկն էլ նա է, որ այդպիսի հանգամանքներում մարդիկ նոր ճանապարհներ են փնտռում, նոր գաղափարների իրականացման մասին են մտածում, և քանի որ այս [illegible] չեն գտնվել՝ կեանքը շատ դժուարանում է:

Երկար դարերի ընթացքում հայի քաղաքական կեանքում եկեղեցին և հոգևորականութիւնը մեծ դեր են խաղացել: Քաղաքական անկախութիւնը կորցնելուց յետոյ, քաղաքական կենտրոն և անխառն հայրենիք չունենալու պատճառով՝ հայ ժողովրդի քաղաքական անկախութեան բոլոր ջանքերը ի դերև են ելել:

Հայ յեղափոխական կուսակցութիւնները չեն, ի հարկէ, որ Հայաստանի բարենորոգումների խնդիր են ստեղծել. հազարաւոր տարիներ այս խնդիրը զբաղեցրել է հայի հոգին ու միտքը, հազարաւոր տարիներ հայ ազգի ազդեցիկ դասակարգերի մէջ եղել է երկու կուսակցութիւն—մէկը՝ որ ձգտել է Հայաստանում ստեղծել ազատ և անկախ քաղաքական մարմին, իսկ միւսը՝ որ չէ հաւատացել այս գաղափարի իրականացման և քարոզել է, թէ հայը խաղաղ կուլտուրական կեանքով պիտի ապրի, իսկ անկախ Հայաստանն անիրագործելի երազ է: Կեանքն ինքը վաղուց ապացուցել է, թէ հոսանքներից որը պատմական աւելի հիմք ունի: Այսօր արդէն նոյն իսկ Դաշնակցութիւնը հայկական խնդիրը այլ կերպ է հասկանում, քան թէ մի քանի տարի առաջ: Այսօր մտածում են Հայաստանում մտցնել ռեֆօրմներ բոլոր ազգերի համերաշխ գործունէութեամբ, այսինքն այլևս զուտ հայկական խնդիր չը կայ հրապարակի վրա:

Թէ որքան իրագործելի է ընկեր Հասօյի և ընկեր Համայի հետ միասին խորտակել չար սուլթանի թախտը, դա ապագան շատ շուտով կապացուցանի: Ես անձամբ դեռ չեմ հաւատում, որ քիւրդ Հասօն ու թիւրք Համան հայ գիւղացու հետ միասին պիտի Հայաստանում ռեֆօրմներ մտցնեն մօտակայ ապագայում: Ես հաւատում եմ, որ եւրոպական երկաթուղիները, քաղաքական բարեկարգ դասաւորութիւնները աւելի շուտ կը լուծեն հայկական խնդիրը, քան թէ Հասօյի և Համայի եղբայրութիւնը, որոնք մինչև այսօր դեռ մի քանի հայ հերոսների կորստեան պատճառ են դառել: Այսպիսով սեփական ուժերով հայ ժողովրդի տառապանքներին օգնել չը կարողացանք. մեր երկրում ապրող իսլամ ժողովուրդների հետ համերաշխ գործունէութիւնը որքան էլ հաժակրելի լինի իբրև գաղափար՝ շատ երկար ժամանակի խնդիր է: Յունաստանի, Բուլղարիայի, Սերբիայի և նոյնիսկ Իտալիայի ազատութեան պատմութիւնը ապացուցանում է, որ եւրոպական տէրութիւնների միջամտութիւնը ահագին դեր է խաղացել փոքր ազգերի կեանքում. բաւական է յիշել, որ չը նայելով յոյների հերոսական ապստամբութիւններին՝ նրանք ոչինչ չէին կարողանում անել, երբ որ Ռուսաստանը չէր կամենում խառնվել: Բայց երբ որ Աղեքսանդր առաջին կայսեր մահից յետոյ Նիկօլայ I-ը, որ «սրբազան դաշինքի» կողմնակիցներից չէր, 1826 թ. համաձայնութիւն կապեց Անգլիայի հետ յունական խնդրի առիթով և հետևեալ 1827 թ. արդէն Ֆրանսիան, Անգլիան և Ռուսաստանը հոկտեմբերի 8-ին միացեալ պետութիւնների նաւատորմիղը Նաւարինի պատերազմով վերջ դրեց յոյների դարևոր լծին Յունաստանում, այդ ժամանակ միայն ազատ շունչ քաշեց: Նոյնը կարող է կրկնվել և Հայաստանի վերաբերմամբ: Արդ՝ երբ որ քաղաքական պայմանները կը գան լուծելու Հայաստանի վիճակը, Էջմիածնի կաթողիկոսը կարող է որևէ դեր խաղալ թէ ոչ: Գաղափարների շփոթութիւնների պատճառով մեր մէջ կան մարդիկ, որոնք կարծում են, թէ հայ եկեղեցին և կաթողիկոսը խաղաղ կորցրել են իրանց նշանակութիւնը: Ճիշտ է, արդեօք այս դատողութիւնը: Բնաւ ոչ: Բեռլինի դաշնագրութեան 61-դ յօդուածը ծագեց հայ հոգևորականութեան եռանդուն գործունէութեամբ. Էջմիածնի կալուածների գրաւման ժամանակ Էջմիածնի կաթողիկոսն էր որ ժողովրդի շահերի պաշտպան և թարգման հանդիսացաւ, որպէս և դպրոցական խնդրում: Նոյն այն մարդիկ, որ այսօր խօսքերով միայն պնդում են, թէ կաթողիկոսութիւնը կորցրել է իր նշանակութիւնը, իրանք էին դիմում կաթողիկոսին և նրա միջոցով էին կամենում գործ անել: Նոյն իսկ Օրմանեան պատրիարքը իր եպիսկոպոսներով ահագին դեր կատարեց իր խելացի և վերին աստիճանի նշանաւոր թղթով: Փաստերը այսպիսով կասկած չեն թողնում, որ հայոց կաթողիկոսը դեռ շատ մեծ դեր ունի կատարելու, դուցէ և աւելի շատ մեծ, քան թէ մինչև այսօր: Էջմիածնապատկան և եկեղեցական կալուածների և մեր դպրոցական հարցերը անմիջապէս կապված են օրէնքով կաթողիկոսի անձնաւորութեան հետ, որովհետև նա է սինոդի նախագահը, որ կարող է ոչ միայն ընթացք տալ գործին, այլ և այս գլխաւոր խնդիրների լուծման նոր կանոնագրութեան նախաձեռնութիւն ունենալ: Այսպիսի հանգամանքներում, երբ վաղը միւս օրը կարող է հայկական հարցը [illegible], երբ բազմաթիւ նշանաւոր խնդիրներ կան հրապարակի վրա, մեծ է աւելի յարմարաւոր թեկնածուն: Արդեօք ցանկալի է կաթողիկոս ունենալ ընդհանրապէս մի զարգացած մարդ, որ կարող կը լինի ըմբռնել եւրոպական քաղաքականութեան ելևէջները, կարող կը լինի հետևել և սեփական խելքով և գրչով ծառայել ժողովրդի շահերին, թէ մի տգէտ, ողորմելի, Էջմիածնի մութ խուցերում նստած չնչին շահերով ապրող ինտրիգան մարդկանց ձեռքով խաղալիք դարձող և հաւի խելք չունեցող մի հոգևորական: Իզմիրլեան պատրիարքի թեկնածութեան դէմ ոչ մի հայ լինել չէ կարող, բայց արդեօք կազատէ՞ նրան սուլթանը հպատակութիւնից, կարող կը լինի նա կարևոր չափով քաղաքագէտ և վարչական ձիրք ունենալ: Մեզ թւում է, որ նոյն իսկ հայկական խնդրի պաշտպանութեան համար հարկաւոր է մի զարգացած մարդ, որ իբրև կաթողիկոս կարող լինի լսելի դարձնել իր ձայնը: Խնդրին պէտք է մօտենալ անկեղծութեամբ և ոչ կուսակցական կամ անձնական միտումներով: Այսպիսի զգացումներով կարող են ղեկավարվել նրանք, որ սինոդի անդամ կամ եպիսկոպոս են կամենում դառնալ, բայց ոչ անկախ և ժողովրդի շահերին նուիրված մամուլը:

Գ. Ենգիբարեան

Կ. Հ. Բ. ԸՆԿ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ *)

Հ. Առաքելեան այդ առիթով տալիս է ժողովին այնպիսի բացատրութիւններ, որոնք խնդիրը միանգամայն յեղաշրջում և բոլորովին այլ կերպարանքի ներքոյ են ներկայացնում: Դուրս է գալիս, որ եթէ խորհուրդը իրան փոքր ինչ նեղութիւն տար կարդալու պարզապէս ընկերութեան նախկին տարիների արձանագրութիւնները և տեղեկագրերը, նա ամենևին պէտք չէր ունենալ այնքան երկար ժամեր զուր տեղ տալու, խորհրդակցութիւններ կազմել, մասնաժողովներ ընտրել, որովհետև նա կը տեսնէր, որ 1) ընկերութիւնը ունեցել է նոյնպէս և աւելի ճոխ ծրագրով հաստատված մի կենտրոնական մատենադարան-ընթերցարան, երկու ճիւղերով՝ հանրակրթական և կովկասագիտական-արևելագիտական-հայագիտական, 2) ծախսել է այդ մատենադարանի վրա հազարներ, 3) ունեցել է յատուկ գրադարանական մասնաժողով, որի ղեկավարներն են եղել Ալ. Երիցեան, Ս. Մալխասեան, Հ. Առաքելեան և այլք, որոնցից վերջին երկուսին սակայն խորհուրդը հարկ չէր համարել հրաւիրել խորհրդակցութեան և որոնք կը բացատրէին խորհրդին՝ թէ հարկ չը կայ նոր նիզակներ ճոճեցնել, նոր Ամերիկա գտնել, 4) այն ծրագիրը, որ այժմ մշակել է նոր մասնաժողովը, ոչ մի առաւելութիւն չունի վաղուց մշակված և հաստատված ծրագրի հետ, որ տպված է ընկերութեան տեղեկագրերի մէջ, 5) մի խօսքով, խորհուրդը զուր տեղ ժամանակ է վատնել, թէ ինչպէս կատարել կամ իրագործել մի գործ, որ վաղուց կատարել և իրագործել են իրանից առաջ ուրիշները: Բոլոր այդ կատարված գործի մասին խորհուրդը ոչ միայն ոչինչ չէ յիշում—ասաց Հ. Առաքելեան—իր զեկուցագրի մէջ, ոչ միայն տեղեկութիւններ չէ տալիս, թէ ներկայումս որտեղ են այդ ճոխ գրադարանի մատեանները, ում մօտ են գտնվում, այլ բաւականանում է մի թռուցիկ, հաւանցի ակնարկով:

Հ. Առաքելեանի տուած այս բոլոր բացատրութիւնները համոզեցին ժողովը, որ պարզապէս պէտք է վերաբացել միայն նախկին կենտրոնական մատենադարան-ընթերցարանը:

Երուանդ Լալայեան յայտնում է այն միտքը, որ ընկերութիւնը պէտք է բանայ միայն հանրակրթական ճիւղ, թողնելով մասնագիտականը՝ գիտնական մի հիմնարկութեան, ինչպիսին է Ազգագրական ընկերութիւնը, որ արդէն նախաձեռնել է կովկասագիտական գրադարան բանալու գործին, որը մասամբ գլուխ է եկել:

Մելիք-Այվազեան օգտվելով առիթից, առաջարկում է գրադարանի մի ճիւղ բանալ Հաւլաբարում:

Ընդհանուր ժողովը ընդունեց պ. Հ. Առաքելեանի առաջարկութիւնը, որ վերաբացվի նախկին գրադարանը, և այդ մասին առանձին զեկուցումն ներկայացնել մի ուրիշ անգամ:

Երկրորդ զեկուցումն եղաւ դպրոցական գործի մասին: Օրակարգի մէջ մնացած վերնագրի տակ խորհուրդը տուեց մի այնպիսի զեկուցումն, որից երևաց, թէ առաջարկվում է փակել Խասգազեանի որբանոցին կից գոյութիւն ունեցող դպրոցը, որ կլանում է իբր թէ տարեկան 9000 րուբլի և այդ 9000 ր. յատկացնել գաւառներում դպրոցներ բանալու գործին: Եւ երբ ժողովականներից մէկը՝ պ. Տիգրան Յովհաննիսեան հարցրեց, թէ խորհուրդը իրաւունք չունի այդպիսի անորոշ ձևերի տակ (դպրոցական գործի մասին զեկուցումն), առանց կանխապէս յայտարարելու, դնել ժողովի առաջ դպրոցի փակման խնդիրը և առաջարկեց յետաձգել այդ հարցի քննութիւնը: Խորհրդի նախագահ պ. Ս. Յարութիւնեան մի պաթետիկ ճառով աշխատեց ցոյց տալ, թէ բոլոր այն անձինք, որոնք առարկում են խորհրդի առաջարկութեան դէմ (Տ. Յովհաննիսեան, Աշոտ Աթանասեան, Ռ. Խանազատեան և այլք), չեն հասկանում, թէ պէտք է լոյս և գիտութիւն տարածել գաւառներում, ուր տիրում է խաւար և տգիտութիւն: Բայց այստեղ յանկարծ, շնորհիւ բժիշկ Ալէքս. Խատիսեանի հարցապնդումների, երևաց մի շատ տարօրինակ բան. յայտնվեց, որ խորհուրդը, իսկապէս, նիզակներ է ճօճեցնում օդի մէջ, զուր տեղ զբաղեցնում է ժողովը այնպիսի հարցերով, որոնց մասին խօսք կարող է լինել միայն 5 տարի յետոյ, որ, իսկապէս, գոյութիւն չունի ոչ մի դպրոց, որ կլանէր ընկերութեան միջոցներից տարեկան 9000 րուբլի, որ այդ 9000 ր. միայն երևակայութեան մէջ է առ այժմ, հետևաբար նա չէ կարող գործադրվել այն գործի համար, որի մասին այնքան պաթետիկ ճառեր արտասանեցին, այսինքն գաւառում դպրոցներ բանալու գործին: Եւ ստացվեց մի զաւեշտական վիճակ, որ պ. Խատիսեան բնորոշեց հետևեալ խօսքերով. «Դուք դեռ արջը չը սպանած, նրա մորթին բաժանել էք կամենում»: Շատ ճիշտ նկատողութիւն: Այդ զաւեշտական դրութիւնից մի կերպ դուրս գալու համար, պ. Ս. Յարութիւնեան առաջարկեց ժողովին քուէարկել՝ թոյլ է տալիս ժողովը փակել այժմ գոյութիւն ունեցող դպրոցը որբանոցին կից, որի վրա նախահաշւով որոշված է 300 ր., թէ՞ ոչ:

Տ. Յովհաննիսեան ընդգծում է, որ խորհուրդը բնաւ իրաւունք չունէր նախ առաջարկել նախահաշիւը հաստատել, իսկ յետոյ նրա որևէ կէտի վերաբերութեամբ առանձին զեկուցում ներկայացնել: Այսօր հարցը չէ կարելի լուծել: Առաջարկում է յատուկ դրա համար արտակարգ ժողով հրաւիրել:

Գ. Յովհաննիսեանին միացան պ. պ. Ահարոնեան, Հ. Առաքելեան, Մելիք-Բախտամեան, Կաֆեան, Խաժակ և այլք:

Վերջ ի վերջոյ, 41 ձայնով ընդդէմ 24-ի, որոշվեց քուէարկել դպրոցը փակելու կամ չը փակելու հարցը. 46 ձայնով դպրոցը որոշվեց փակել:

Դրանից յետոյ խորհուրդը զեկուցեց Շուշու ճիւղի առաջարկը՝ ընտրել ընկերութեան պատուաւոր անդամ պ. Առաքել Բաբախանեանին (Լէօ): Այդ առաջարկին կցված խորհրդի զեկուցումը դարձեալ ցոյց տուեց, որ խորհուրդը այդ խնդրում ևս ղեկավարվել է որոշ տենդենցիաներով և դուրս եկել անաչառութեան սահմաններից: Նա ոչ մի փաստ չէր բերել, թէ, իսկապէս, որոնք են պ. Լէօի ընկերութեան մատուցած այն առանձին ծառայութիւնները, որոնք պահանջվում են կանոնադրութեամբ՝ մեկին պատուաւոր անդամի տիտղոսը տալու համար, քանի որ մի երկու տարի վարչութեան քարտուղարի, նախագահի և ընթերցարանի կառավարիչ լինելը դեռ չէ նշանակում «առանձին ծառայութիւններ»։

---

*) Տպում ենք, համաձայն մեր խոստման, թէև համամիտ չենք մի քանի կէտերի հետ: Խմբ.

*) Տես «Մշակ» № 109.

Բայց այստեղ դարձեալ տեղի ունեցաւ մի միջնադէպ, որի վրա արժէ մի փոքր կանգ առնել։ Հաղիւ կարդացվեց զեկուցումը և դեռ ոչ ոք ոչ մի խօսք չէր արտասանել, երբ ժողովականներից մինը, պ. Գ. Կաֆեան, ոտքի կանգնելով արտասանեց հետեւեալ բնորոշ խօսքերը. «Պարոն նախագահ, ես առաջարկում եմ թոյլ չը տալ ոչ ոքի խօսել այդ հարցի մասին, այլ ուղղակի, առանց որեւէ ընդդիմախօսութեան, առանց որեւէ քուէարկութեան, միաձայն ընտրել պ. Լէօին պատուաւոր անդամ»։ Այս առաջարկը այնքան տարօրինակ էր, որ ժողովականներից մէկը անուանեց «վայրենի առաջարկ»։ Նախագահը, ի հարկէ, մերժեց այդ տարօրինակ առաջարկն ամբողջն և յայտնեց, որ այդ հարցի մասին ամեն մարդ կարող է խօսել։ Առաջինը խօսեց պ. Մելքումեան (խորհրդի անդամ), որ մատնանշեց, թէ կանոնադրութեան համաձայն ընկերութեան պատուաւոր անդամ կարող են լինել միայն նրանք, որոնք մի առանձին ծառայութիւն են մատուցել ընկերութեան։ Մինչ, ինքը անձնապէս դէմ չը լինելով, գտնում է, որ Լէօի ցոյց տուած գործունէութիւնը բարեգ. ընկերութեան չէ տալիս նրան պատուաւոր անդամ ընտրելու իրաւունքը։ Պատուաւոր անդամ ընտրելու առաջարկութիւնը պայմանաւորվում է իրոք Լէօի յոբելեանով, բայց ոչ նրա՝ բար. ընկ. ցոյց տուած գործունէութեամբ։

(Կը շարունակվի)

ԹՈՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք—1) Վարշավայից, Գ. Բագրատեանից—4 ր., 2) Բագուից, եղբարք Խօջաքալիբեաններից (տես «Մշակ» № 101)—100 ր., 3) Բագուից, եղբարք Զամշուդ և Յովհաննէս Ղազիեաններից (տես «Մշակ» № 101)—10 ր., 4) Բագուից, Յովհ. Մալխասեանից (տես «Մշակ» № 101)—5 ր., 5) Սուխումից, մի ումից—20 ր., 6) Դուբօվկայից, Թովմաս Ն. Մարգարեանից—15 ր., 7) Պարսկաստանի Ղօչան քաղաքից, հանգանակած Անդրէաս Բէջանեանի ձեռքով, տեղական հայ հասարակութիւնից—84 ր., 8) Վլադիվօստոկից, Զամշուդ Յարութիւնեանի և Խասրով Գրիգորեանի ձեռքով, հանգանակած տեղական հայ հասարակութիւնից—25 ր. 75 կ.։

«Մշակի» № 72-ում տպված նուէրը 96 ր., որ ուղարկել էր մեզ ինժեներ Խ. Միրզոյեան, Ն.-Դնէպրօվսկ կայարանից, նուիրել են հետեւեալ անձինք. Ա. Սարգսեանց—15 ր., Խ. Միրզոյեանց, Մ. Կուզանեանց, Ա. Կոզեանց, Ա. Տատօսօվ, Մ. Սամարջեւ—10-ական րուբլի, Խուզանեանց, Բ. Կարապետեանց, Շ. Սամարջեւ, Գ. Տէր-Գրիգորեանց, Գ. Կորգանօվ—5-ական ր. և Գ. Ավէչեանց, Բ. Փորտիկեանց—3-ական րուբ.։

ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՏԱՌԱՊԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք—1) Բագուից, Գ. Բաբիկեանից, հանգանակած Միրզոյեան և ընկ. գրասենեակում, ի նպաստ Նոր-Բայազետի սովեալների—75 ր., 2) Քերչից, մի անյայտից, ի նպաստ «Մշակի» № 82-ում տպված Փիր-Դաշբուլաղ գիւղի—10 ր., 3) Դուբօվկայից, Թովմաս Ն. Մարգարեանից—15 ր., 4) Վլադիվօստոկից, Զամշուդ Յարութիւնեանի և Խասրով Գրիգորեանի ձեռքով, հանգանակած տեղական հայ հասարակութիւնից—25 ր. 75 կ.։

ԶԱՆԱԶԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Ստացանք—1) Արմաւիրից, երդուեալ-հաւատարմատար Զաւադբէկ Բալուղեանից—10 րուբլի, Հնագիտական Թանգարանի ֆոնդի համար, յանձնելու հայոց ազգագրական ընկերութեան վարչութեան. 2) Մոսկվայից, պ. Մովսէս Շահնազարեանից, ի նպաստ պ. Լէօի, յոբել.-յանձնաժողովին յանձնելու—100 րուբլի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Նորերս վախճանված շուշեցի Հայրապետ Ղալամեանցը կտակով յատկացրել է 4000 րուբլի բարեգործական նպատակի։ Այդ գումարից 2000 րուբլի յատկացրել է Զանգեզուրի Տաթև գիւղի հայ հասարակութեան՝ հասարակական շտեմարան հիմնելու, իսկ 2000 ր. Կովկասի հայոց բարեգործ. ընկերութեան Շուշու ճիւղին։

◆ Վաղը տեղի է ունենալու տնայնագործական ընկերութեան զբօսանքը Մուշտայիդի այգում։

◆ Մոսկվայից ստացվել է հետեւեալ նամակը. «Հայ ձեռնարկներ ու նրանց օժանդակող գրուածքներ յօրինող և ուսուցիչ Գրիգոր Վանցեանի եղեռնական մահը, [illegible], մեծ անակնկալ լինելով հանդերձ, միաժամանակ զգալի կորուստ է ներկայանում, երբև բաղձալի ու լաւ ապագայ խոստացող գրական թարմ ուժի կորուստ, այլ էլ՝ ըսկական գործիչների կարօտ՝ մեր այս խառն ու վիշտ ժամանակաշրջանում։ Խոր ցաւակցութիւնս եմ յայտնում ինչպէս հանգուցեալի կոլլեգաներին, այնպէս էլ ժառանգ նրա այրին և Բագրատունի աւագ քահանային։ Եմմ. ք. Նազարեան»։

◆ Լէօի յոբելեանական յանձնաժողովը խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. «Հինգշաբթի օրը, հանդիսից յետոյ, տեղի կունենայ ճաշկերոյթ ի պատիւ յոբելեարի։ Ցանկացողները հրաւիրվում են կանխաւ ստորագրվել Կովկասի հայոց բարեգ. ընկ. գրասենեակում։ Ցանկը գոցվում է չորեքշաբթի, մայիսի 21-ին, ժամը 3-ին ճաշից յետոյ»։

◆ Վաղը, հինգշաբթի, Զուբալօվի ժողովրդական տանը Դերժավինը կը դասախօսէ՝ «Սանին»—Արցիբաշեվի»։ Դասախօսութիւնից յետոյ կը ներկայացվի «Բորիս Գոդունօվի» 3-րդ գործողութիւնը և համերգ։

◆ Բօրչալուի գաւառում ապրիլի 22-ից մինչև մայիսի 8-ը ժանտախտով հիւանդացել են ընդամենը 12 անասուն։ Գօրու և Թիֆլիսի գաւառներում հիւանդութիւն չը կայ։

◆ Թիֆլիսի նահանգական անասնաբոյժ Տիմօֆէեվը մեկնեց Թիֆլիսի և Բօրչալուի գաւառները՝ եղջերաւոր անասունների ժանտախտի դէմ միջոցներ ձեռք առնելու և քննութիւն կատարելու համար։

◆ Ուրբաթ, մայիսի 23-ին, կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում նշանակված է կովկասեան կայսերական գիւղատնտեսական ընկերութեան և կովկասեան պտղաբուծական ընկերութեան միացեալ նիստը, ուր որոշվելու է կենդանիների և բուսականութեան ցուցահանդէսին և կլիմայախօսական համագումարին մասնակցելու հարցը, որոնք նշանակված են Մոսկվայում այս տարվայ օգոստոսի սկզբին և սեպտեմբերի վերջում։

◆ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան խորհուրդը միջնորդութիւն է յարուցել Կովկասի Փոխարքայի առաջ, որ Անդրկովկասի զեմստվային միջոցներից 4000 րուբլի տրվի այգեգործական դպրոցի անյետաձգելի կարիքների համար։

◆ Կով. գիւղ. ընկ. խորհրդի անդամ Տիմօֆէեվը ընկ. առաջիկայ ընդհանուր ժողովում մի զեկուցագիր է ներկայացնելու գաւառներում գիւղատնտեսական ընկերութիւններ բանալու մասին։

◆ Թիֆլիսի քաղաքային դումայական դպրոցական յանձնաժողովը որոշել է միջնորդել քաղաքային վարչութեան առաջ, որ քաղաքային իւրաքանչիւր դպրոցին 20 րուբլի յատկացվի ամառային էքսկուրսիաների համար։

◆ «Закавказье» լրագրի խմբագիր Գօտուայի միջնորդութեան համաձայն, Թիֆլիսի նահանգապետը այդ լրագրի պատասխանատու խմբագրի կոչման մէջ հաստատել է երդ.-հաւ. օգնական Կ. Թումանովին։

◆ Կիրակի, մայիսի 25-ին, Զուբալօվի ժողովրդական տանը վրաց բանաստեղծ Ակակի Ծերեթելին վրացերէն լեզուով կը դասախօսէ «Ժամանակակից գաղափարները, որ յայտնել է 12-րդ դարում վրաց մեծ բանաստեղծ Շոթա Ռուսթավելին» թեմայով։

◆ Թիֆլիսում, վրացի մի խումբ կանանց նախաձեռնութեամբ, կազմակերպվել է վրաց նոր լուսաւորական ընկերութիւն «Գանաթլեբա» (կրթութիւն) անունով։ Ընկերութեան նպատակն է կրթութիւն տարածել և նիւթական օժանդակութիւն ցոյց տալ կարիքաւոր ուսանողութեան, բանալ օրինակելի դպրոցներ, գրադարաններ, ընթերցարաններ և այլն։ Անդամակցական վճարը 3 րուբլի է։

◆ Թիֆլիսի արտիստական ընկերութիւնը վաղը, մայիսի 22-ին, տեղափոխվում է իր ամառային շինութիւնը։

◆ Կիրակի օրվանից Թիֆլիսում լոյս է տեսնում նոր ռուսերէն լրագիր «Тифлисскія Объявленія» անունով, որի խմբագիրն է Զ. Լ. Կենչիեվ։

◆ Թիֆլիսի դատաստանական պալատի աւագ նախագահ սենատոր Կոչուբէյը ծառայութեան գործերով մեկնել է Երեւան։

◆ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է քաղաքային վարչութեան ծախսել քաղաքային նախահաշւում որոշված մայիս ամսվայ գումարը, որ անում է 194,148 րուբլի 31 կ.։

◆ Արտասահմանեան «Բրաուն-Բովէրի» ֆիրման, որ Աւճալայի ջրամբարի համար երկու նասօսներ մատակարարեց, այժմ ձրիաբար քաղաքային վարչութեան մի մանրամասն նախագիծ է ուղարկել՝ քաղաքային փողոցները և հրապարակները լուսաւորելու մասին։

◆ Թիֆլիսի քաղաքային ինժեներ Կօզնօվսկին, քննելով սինեմատօգրաֆներ պահելու մասին նահանգապետի ուղարկած հրահանգները, գտել է, որ բոլորն էլ կարելի է գործադրել և Թիֆլիս քաղաքի վերաբերութեամբ, բացի 1-ին կէտից, որը պէտք է վերամշակվի տեղական պայմաններին համապատասխան կերպով։

◆ Քութայիսի նահանգի Խոնի գիւղաքաղաքում մտադրութիւն կայ բանալ ժողովրդական համալսարան, որի համար այդ գործի նախաձեռնողները դիմել են և հարկաւոր տեղեկութիւններ են խնդրել Թիֆլիսի ժողովրդական համալսարանների ընկերութիւնից։

◆ Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ էլեքտրաքարշի վագոնի առաջին մասում կարող են կանգնել երկու հոգի հասարակութիւնից և երկու ոստիկաններ կամ ժանդարմներ, որոնց խստիւ արգելվում է խօսել վատմանի հետ։ Վերջին մասում կարող են կանգնել ութ հոգուց ոչ աւելի։

◆ Ստացանք «Հայորդիները», Աւօտ Նարճանեանի, Սամսոթօ. գինն է 35 կոպ.։

◆ Վ. Դ. Լիսիցեանի, Թ. Ի. Կարագեզեանի և Կ. Ի. Տուլասի նախաձեռնութեամբ մօտ օրերս Թիֆլիսում բացվելու է մի նոր ժամանակաւոր աուկցիոնի դահլիճ մեծ քաղաքներում գոյութիւն ունեցող այդ տեսակ հիմնարկութիւնների օրինակով։ Որքան տեղեկացանք, այդ աուկցիոնի դահլիճի հիմնադիրները պատշաճաւոր իշխանութիւնից արդէն ստացել են թոյլտուութիւն և իրանց գործը սկսելու են այս քանի օրերս։

◆ Բաթումից գրում են, որ տեղական բանտում երեւան են հանել մի փորուածք, որ ունի 16 արշին երկարութիւն։

◆ ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են մայիսի 18-ից. «Այսօր երկրորդ և վերջին ծխական ժողովն էր. եկած էին 40—50 ծխական. ընտրվեցին Բաթումի կողմից ծխական երեսփոխաններ՝ պ. Յակոբ Մեղաւորեան և պ. Գրիգոր Գրիգորեանց, որ «Մշակի» բազմամեայ թղթակից է։

«Այսօր նշանակված էր քաղաքիս հասարակական այգում «ժողովրդական զբօսանք» յօգուտ հայ կաթոլիկ դպրոցական հաստատութեան։ Ծրագիրը կազմված էր բազմակողմանի, որը խոստանում էր թէ հետաքրքրական և թէ արդիւնաշատ լինելու։ Բայց կէս անձրեւոտ եղանակը խանգարեց. քամիները պոկոտեցին շինված կիոսկները։ Զբօսանքը չը կայացաւ և, ինչպէս խօսվում է, մի քանի տասնեակ րուբլու էլ վնաս հասաւ»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ոստիկանութիւնը ձերբակալել է Մուշտայիդ այգում Նիկօլայ Լօրտկիպանիձէին վիրաւորող Ամիրանովին և Արշակ Սանդրոսովին վիրաւորող պարսկահպատակ Եգոր Շահնազարեանին։

◆ Մայիսի 15-ին, երեկոյեան ժամը 5-ին, Բօտանիչէսկայա փողոցում, Ալի-Հաջի-Կասում-օղլու և Բահաթիր Ախունդովի միջև վէճ ծագեց, որի ժամանակ վերջինս դանակով թեթև վէրք հասցրեց առաջինի կրծքին։

◆ Մայիսի 19-ին, երեկոյեան ժամը 10-ին, ծանր վիրաւորել են պանդոկատէր Իվան Կարանովին։ Վիրաւորող Սամսոնաշվիլին ձերբակալված է։

◆ Մայիսի 19-ին ոստիկանութիւնը ձերբակալեց Բաթումսկի և Անդրէևսկի փողոցների անկիւնում Վալերեան Արվէլաձէին, որ մեղադրվում է անդրկ. երկ. արհեստանոցների գլխաւոր բանուոր Ալէքսանդր Սօչկինին սպանելու մէջ։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Աստրախանի նահանգի գիւղական ծխերից մէկում որոշվել է տեղական դպրոցների կրօնուսոյցներին կրօնի դասաւանդութեան համար ռոճիկ չը տալ։ Քահանաները բնականաբար այդ վճիռը, և հասարակութեանը յայտարարվեց, որ, եթէ կրօնուսոյցներին հրաժարվեն ռոճիկ վճարել, դպրոցները կը փակվեն։ Այդ ուլտիմատումը հաղորդեցին ծխական հերթական ժողովին, որը սակայն իր որոշումը չը փոխեց այն պատճառաբանութեամբ, որ կրօնուսոյցները դպրոցներ չեն յաճախում և ի զուր տեղից ռոճիկ են ստանում, ուստի երեխաները աղօթքները կարող են սովորել ընտանիքներումն էլ։ Ի վերջոյ, թէև ճիշտ է, դպրոցը չը փակեցին, բայց և այնպէս կարգադրութիւն ստացվեց աւարտման քննութիւններ չը կատարել։

◆ Սենատոր Գարինը՝ կառավարչական սենատի I-ին դեպարտամենտի օբեր-սեկրետար Խլեբնիկօվի ու Գ. Խ. Ակսենօվի հետ միասին վերադարձել է Մոսկվա լրացուցիչ քննութիւն կատարելու քաղաքապետի գործերում։ («С. С.»)

◆ Ռուսական գրականութեան սիրողների ընկերութիւնը որոշել է Գօգոլի վրա արձան կանգնեցնել և յոբելեանական հանդէս կազմակերպել նրա ծննդեան հարիւրամեակի օրը։ Թէ արձանի բացումը և թէ հանդէսները տեղի կունենան Մոսկվայում 1909 թւի ապրիլի 26, 27 և 28-ին։

◆ Մօտ օրերս Պետերբուրգ է գալու Լօնդօնից ճապօնական տուրիստների մի խումբ 54 հոգուց բաղկացած։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Մայիսի 16-ի նիստի շարունակութիւնը*)

Սկսվում է մտքերի [illegible] փոխանակութիւն։

Հռետորներից յետոյ ինքը Կոսօրոտովը շատ ցածր ձայնով պարզում է գործի փաստացի կողմը և ազնիւ խօսք է տալիս իր և թէ իրան ընտրող պրօլետարիատի կողմից, որ բանուորներին և գիւղացիներին ապստամբութիւն անել, կողոպտել և քարուքանդ անել նա չէ սովորեցրել, «կրակել մոխրագոյն շինէլների վրա» խօսքերը նա չէ արտասանել։ «Զը հաւատալով ինձ, ձեզանից իւրաքանչիւրը իրան չէ հաւատում»։

Վերջ ի վերջոյ Դումայի քարտուղարը կարդում է բանաձեւը. «Ընդունելով որ Դումայի անդամին ժամանակաւորապէս հեռացնելու գործերում Դումայի իրաւասութիւնը չէ սահմանափակվում հարցի ձեւական կողմով, Դուման անցնում է հերթական գործերին»։

Նախագահ. «Կը հաճէք արդեօք ընդունել այդ բանաձեւը» (աղմուկ. աջակողմեանները դիմում են դէպի դռները, իսկ ձախակողմեանները և ծայրայեղ աջակողմեանները արդէն դուրս են գնացած դահլիճից)։

Մարկով 2-րդ անհրաժեշտ է գտնում տեղեկացնել, որ աջակողմեանների ֆրակցիան ձայնատուութիւնը ապօրինի է համարում։

Նիստը փակվում է ժամը 12 և 35 ր.։

(«Հ. Գ.»)

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուլաւէր, 10 մայիսի

«Մշակի» № 98-ի մէջ պ.պ. Դուլեան և Տէր-Սիմէօնեան մի նամակ են տպագրել, երբ թէ ես դիմել եմ նրանց ծնողներին, որ համոզեն իրանց որդկերանց, որպէսզի Աւանեանի փոխարէն ինձ վրէժխնդիր չը լինեն։ Որովհետև կարող են ընթերցող հասարակութեան մէջ լինել այնպիսի մարդիկ, որոնք միամտօրէն այդ բացարձակ պրօվօկացիան ճշմարտութեան տեղ կընդունեն, ուստի խնդրում եմ թոյլ տուէք երկտողովս հերքել այդ սուտը։

Ինձ հասած լուրերից երեւում էր, որ վերոյիշեալ պարոնները և մի ուրիշ փչացած տիրացու, որը պատկանում է սօցիալիզմը վարկաբեկող թերուս տղաների թւին, երբ թէ իմ դէմ սուտ լուրեր են տարածել Աւանեանի վերաբերեալ, որպէսզի դրանով կարողանան խաբել իրանց այն ընկերներին, որոնք ինձ երբէք չեն ճանաչում։ Բայց, չը հաւատալով այդպիսի զրպարտութիւններին և պրօվօկացիային, որը վերջերս համաճարակի բնաւորութիւն է ընդունել զանազան թեթեւամիտ ու կիսակիրթ տղաների մէջ,—մի օր, հանդիպելով Դուլեանի հօրը, կամեցայ ստուգել այդ և ասացի, որ «զանազան լուրեր են տարածում ձեր որդու պրօվօկատորութեան մասին, որին ես կասկածանքով եմ վերաբերվում. համոզեցէք նրան, որ եթէ այդ ճիշտ է, նա սաստիկ սխալվում է. ամօթ է ամեն մի օրինաւոր մարդու համար առանց հաստատ փաստերի, զզուելի պրօվօկատորի պաշտօն ստանձնելը»։

Աւետիք Մեհրաբեանց

Թիֆլիս, 17 մայիսի

Գայեանեան օրիորդաց դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է յայտնել հետեւեալը.

Ապրիլի 23-ին, Թիֆլիսի ժողովարանի ամառային կացարանում կայացած զբօսանքը յօգուտ Գայեանեան դպրոցի՝ տուեց հետեւեալ արդիւնքը.

Մուտք.—1) տոմսակներից՝ 470 ր. 69 կ., 2) վիճակախաղից՝ 394 ր. 24 կ., 3) բուֆետից 82 ր. 21 կ., 4) ծաղիկներից՝ 40 ր. 15 կ., 5) կոնֆետարի, ուղօչկա՝ 73 ր. 50 կ., 6) օղակներից՝ 20 ր. 57 կ., 7) նուէրներ՝ ա) տ. Աննա Իւզբաշեանից՝ 200 ր., բ) Մանթաշեանի առեւտրական տնից՝ 25 ր., գ) Միրիմանեանից՝ 6 ր.։ Ընդամենը մուտք եղել է 1312 ր. 36 կ.։

Ելք.—1) ժողովարան՝ 100 ր., 2) երաժշտութիւն՝ 55 ր., 3) սազանդար՝ 10 ր., 4) բուֆէտ, ալլեգրիի համար իրեր, կոնֆետներ, ծաղիկներ, տոմսակների, աֆիշաների, յայտարարութիւնների տպագրութիւն, պահապանների և այլ մանր ծախքեր՝ 196 ր. 30 կ.։ Ընդամենը ծախս 361 ր. 30 կ.։

Զուտ արդիւնք մնացել է 951 ր. 6 կ.։ Իսկ եթէ հանենք տիկ. Իւզբաշեանի նուէրը, որ տրված է յատկապէս չքաւոր աշակերտուհիների ուսման վճարի համար զբօսանքի առթիւ, այդ դէպքում զուտ արդիւնքի գումարը կը լինի 751 ր. 6 կ.։

Բացի դրանից, բազմաթիւ անձինք և մագազիններ ու դպրոցի նախկին սանուհիներ նուիրել են իրեր վիճակախաղի համար։

Հոգաբարձութիւնս իր խորին շնորհակալութիւնն է յայտնում թէ տիկ. Ա. Իւզբաշեանին և թէ մնացած բոլոր նուիրատուներին, ինչպէս տ. տ. Մարիամ Յարութիւնեանին, Եղ. Առաքելեանին, Թադէոսեանին, Իսահակեանին, Աթանասեանին, Մնացականեանին, Աղամալեանին, Բաստուրմաջեանին, Նալբանդեանին, Մուրադեանին, իշխ. Մ. Թումանեանին, Նինա Եսայեանին և օր. օր. Ղարաջեաններին, Շահիկեանին, Տէր-Գրիգորեանին, Կարալեանին, Նազարէթեանին, Արարատեանին, Զուրաբեանին, Քիշմիշեանին և պ. պ. Ն. Մատինեանին ու Ս. Եսայեանին, որոնք սիրալիր կերպով աջակցեցին և նպաստեցին զբօսանքի կազմակերպութեանն ու աջողութեանը։

Նախագահ հոգաբարձութեան՝
Հ. Առաքելեան
Անդամ-քարտուղար՝
Բժ. Լ. Բալանթարեան

Վլադիվօստոկ, 24 ապրիլի

Այսօր փոխադրեցինք ձեզ յիսուն և մէկ րուբլի 50 կ. հաւաքած տեղիս հայերից յօգուտ սովեալների (կէսը Թիւրքահայ, իսկ միւս կէսը Կովկասի սովեալների օգտին)։ Մայիսի 1-ին ուղարկած ենք երեսուն և վեց (36) րուբլի միենոյն սովեալների օգտին։ Խնդրում ենք նուիրատուների անունները միասին հրատարակել ձեր լրագրի առաջիկայ համարներից մէկում։

Նուիրատուների անունները.

Խ. Գրիգորեան 10 ր., Զ. Յարութիւնեան 5 ր., Ս. Դարմանեան 2 ր., Լ. Ամիրեան 2 ր., Թ. Ստեփանեան 1 ր., Գ. Շարբաթեան 2 ր., Գ. Եղազեան 2 ր., Ա. Աղամալեանց 1 ր., Ս. Գալոյեան 1 ր. 50 կ., Խ. Խասփեան 1 ր. 50 կ., Ա. Տէր-Սահակեան 50 կ., Գ. «Զինւոր» 50 կ., Ա. Օհանջանեան 50 կ., Յ. Այվազեան 50 կ., Յ. Բարսեղեան 50 կ., Յ. Բաղասեան 50 կ., Ա. Առաքելեան 4 ր., Ս. Աբովեան 2 ր., Զ. Շահպարոնեան 1 ր., Ա. Մատուրեան 2 ր., Խասրով և Վաղարշակ 1 ր., Ս. Յարութիւնեան 1 ր., Գ. Սաղաթեան 2 ր., Յովսէփ և Արտաշ 2 ր. 50 կ., Մ. Լալայեանց 4 ր., Աստուածատուր և Աբգար 3 ր., կապիտան Գ. Պօպօվեան 4 ր., Խաչէն Շարլոյեանց 1 ր., Ի. Տէր-Միքայէլեան 15 ր., Ս. Տէր-Յովհաննիսեան 11 ր., Ե. Գիլիմեան 1 ր.։ Գումարն է 87 ր. 50 կ.։

Ի դիմաց Վլադիվօստոկի հայ հասարակութեան՝
Զամշուդ Յարութիւնեան
Խասրով Գրիգորեան

Թիֆլիս, 19 մայիսի

Կիրակի, մայիսի 18-ին, ինչպէս Թիֆլիսի բոլոր հայ եկեղեցիներում, նոյնպէս և Մէյդանի ս. Գէորգ եկեղեցում ծխական ժողով էր նշանակված՝ երեք պատուիրակ ընտրելու համար, որպէսզի այս վերջիններս մասնակցեն Թիֆլիսից ուղարկվելիք կաթողիկոսական պատգամաւորների ընտրութեանը։

Եկեղեցու տ. քահանան ժողովը բաց արաւ և ժողովականներն սկսեցին ընտրութեան գործին անցնել։ Ծխականների շրջանում տրամադրութիւն էր տիրում իբրև պատուիրակներ ընտրելու պ.պ. Բաշինջաղեանին, Միրաղեանին և Գր. Աբեշեանին։ Բայց յանկարծ, ժողովականներիս համար բոլորովին անսպասելի կերպով, տեղից վեր կացաւ բօյկօտիստների ընկերութեան յայտնի անդամ Ամիրխանեանը և, հակառակ իր կուսակցական դաւանանքի, սկսեց տաք տաք խօսել ու պաշտպան հանդիսանալ կաթողիկոսական ընտրութեան գաղափարին։ Այդ հանգամանքը առիթ ծառայեց ժողովականներից շատերին՝ գիջել պ. Ամիրխանեանին թեկնածուներից մէկի տեղը։ Այդպիսով Մէյդանի ս. Գէորգ եկեղեցու ծխական պատուիրակներ ընտրվեցին Բաշինջաղեան՝ 52 ձայնով, Միրաղեան՝ 51 և Ամիրխանեան՝ 37 ձայնով։

Ծխական

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՒՏՈՒՐԸ

Ի նկատի ունենալով մեր հարեւան պարսկական առեւտրի նշանակութիւնը, որի մէջ հայերը խաղացել են և խաղում են նշանաւոր դեր, աւելորդ չի լինի ծանօթացնել ընթերցողներին իրերի դրութեան հետ, մանաւանդ երբ այժմ պարսկական մաքսատունը սկսել է հրատարակել ճիշտ վիճակագրական թւեր *)։

Յայտնի է, որ հանգուցեալ Մուզաֆֆէր-էդդին շահի օրով պարսկական մաքսատունը դրվեց այլ հիմունքների վրա, երբ րէֆօրմի գլուխ անցան եւրօպացիները (բելգիացիների ղեկավարութեամբ)։ Մինչև այդ՝ երկրում գործադրութեան մէջ էր 1828 թւի օրէնքը, որի հիման վրա վերցվում էր բոլոր թէ ներմուծվող, թէ արտահանվող ապրանքների արժողութեան 5 տոկոսը, որպէս մաքս։ Բելգիացիների մտցրած տարիֆը մաքսավճարը—դիֆերենցիալ է (ուրիշ-ուրիշ զանազան ապրանքների համար, բազմատեսակ) և մի շարք ապրանքներ բոլորովին ազատ են մաքսից՝ թէ արտահանութեան, թէ ներմուծվելու համար։ Այդ րէֆօրմի հետեւանքը բարեյաջող է նկատվում պարսկական արտաքին առեւտրի նկատմամբ, կարճ միջոցում զգալի չափով բարձրացնելով առեւտրի ծաւալը։ Անշուշտ նպատակայարմար տարիֆը այդ պատճառներից մէկը կարելի է նկատել։ Եւ անհաստատ մաքսային կանոնները այնքան էլ լաւ չէին կարող պահել շահն-շահի երկիրը համաշխարհային առեւտրի նուաճումից։

Գանք յիշված տարվայ հաշուետուութեան։ 1906—1907 թւերի յայտնի ներքին անպաստ պայմանները—քաղաքական խառնակութիւնները—չը վնասեցին սակայն արտաքին առեւտրի աճելուն։ Նախորդ տարվանից ներմուծված է 8,915,336 րուբլու աւել ապրանք և արտահանված է 12,046,706 ր. աւել, ասել է հաշուեկշիռը աւելացել է 20,962,038 րուբլով (պարսկական ղրանը հաշուելով 20 կոպէկ)։ Վերջին տարվայ ընթացքում Պարսկաստանը արտահանել է 70,675,368 րուբ. ապրանք և ներմուծել է 86,187,954 ր., ասել է առեւտրական հաշուեկշիռը (балансъ) նպաստաւոր չէ երկրի համար 15—16 միլիոն րուբլով։ **) Գանք պետութիւնների մասնակցութեանը այդ առեւտրին։

Ներմուծվող ապրանքների վերաբերեալ

Ռուսաստանը	44,480,750 ր.	կամ	51,6 %
Անգլիան (Հնդկաստանի հետ)	26,460,402 »	»	30,7
Ֆրանսիան	4,672,817 »	»	5,4
Աւստրիան	2,986,125 »	»	3,4
Թիւրքիան	2,605,493 »	»	3,2
Գերմանիան	1,666,989 »	»	2,9
Աւղանիստանը	1,264,948 »	»	1,5

---

*) «Պարսից պետութիւն։ Մաքսերի վարչութիւն։ Առեւտրական վիճակագրութիւն։ Ընդհանուր տեղեկութիւններ օտար երկրների հետ առեւտրին վերաբերեալ մի տարվայ ընթացքում (մարտ 1906—մարտ 1907)»։ Ֆրանսերէն գիրք in folio, 67 երես։ Հակառակ մեր ջանքերին և դիմումներին յիշած բրօշիւրը մեր ձեռքը չանցաւ, թւերը մենք վերցնում ենք պաշտօնական «Вѣстн. Финансовъ» շաբաթաթերթից (№ 15, 1908 թ.)։

**) Գաղափար կազմելու համար այս թւի մասին, պէտք ասել, որ նոյն տարվայ (յունվար 1906—յունվար 1907) Ռուսաստանի արտահանութիւնը հաւասար էր 1,001,9 միլիոնի իսկ ներմուծումը 624,4 միլիոն րուբլու, ընդհանուր բալանսը այդպիսով յօգուտ Ռուսաստանի էր (377,5 միլիոն)։ Բայց չը պէտք է մոռանալ, որ Ռուսաստանը վիթխարի պարտք ունի, որի տոկոսիքը՝ մօտ 400 միլիոն տարեկան՝ մեծ մասամբ ստանում է Եւրօպան։ Պարսկաստանը նոր է սկսում պարտքեր անել և նրա պարտքը (ռուսաց փոխառութիւն) չէ անցնում 12—20 միլիոն րուբլու դրամագլխից։

*) Տես «Մշակ» № 109

Արտահանվող ապրանքների վերաբերեալ

Ռուսաստանը . .	45,075,933 ր.	կամ	63,$_{8}$ %
Անգլիան (Հնդկաստանի հետ)	7,325,818 »	»	10,$_{3}$
Ֆրանսիան . . .	2,792,679 »	»	—
Աւստրիան . . .	5,748 »	»	—
Թիւրքիան . . .	11,806,815 »	»	—
Գերմանիան. . .	302,862 »	»	—
Աւղանստանը . .	923,340 »	»	1,$_{3}$

Ռուսաստանի և Անգլիայի առևտրի ծաւալը Իրանի հետ բացատրում է երկու պետութիւնների քաղաքականութիւնը, անգլօ-ռուսական վերջին համաձայնութիւնը, երկու պետութիւնների վաղուցվայ մրցութիւնը Պարսկաստանում, առկախ այդ պետութիւնների տերրիտորիաների հարևանութիւնը Իրանի հետ... Ընթերցողը կը նկատի անշուշտ Թիւրքիայի խոշոր մասնակցութիւնը արտահանութեան գործում (մօտ 12 միլ. ր.)։ Բայց Թիւրքիան իր համար չէ արտահանում, այլ եւրօպացիների և Ամերիկայի համար։ Երբ փակվեց Անդրկովկասի տրանզիտը, Պարսկաստանի ընդհանուր ապրանքները ստացան այլ ուղղութիւն՝ դէպի Տրապիզոն, Զմիւռնիա և այլն։ Այդ պատճառով էլ դժուար է որոշել թէ իրօք Ֆրանսիան, Աւստրիան, Թիւրքիան և Գերմանիան ո՞րքան ապրանք են արտահանում Պարսկաստանից, և մենք դիտմամբ արտահանութեան չափը այդ երկիրների վերաբերեալ չը վերածեցինք տոկոսի։ Ապագայ Պօլիս-Բաղդադ երկաթուղու գիծը մեծ դեր պիտի խաղայ այդ տրանզիտի գործում և Գերմանիան օրէ-օր աւելի ուշադրութիւն պիտի դարձնի Իրանի վրա, ինչպէս վերջերս Թիւրքիայի։

Հետաքրքրական է Ռուսաստանի և Պարսկաստանի առևտրի վիճակագրութիւնը ապրանքների տեսակէտից. եթէ վերցնելու լինենք մէկ միլիօն րուբլու արժողութիւնից աւել ապրանքներ, այն ժամանակ ներմուծվող ապրանքները կը դասաւորվեն այս կերպ.

Բամբակեղէն (գործուածք)	11,830,944 րուբ.
Շաքար	19,807,995 »
Երկաթ, ժեստ	1,407,040 »
Նաւթ	1,367,320 »
Ալիւր	1,235,970 »
Թէյ	1,047,470 »

Եւ արտահանվող ապրանքները՝

Հում բամբակ . . .	9,058,900 րուբլու
Չոր մրգեղէն . . .	9,018,146 »
Ձուկ, խաւեար . . .	6,412,496 »
Բրինձ	5,053,539 »
Արծ. և ոսկու դրամներ	2,756,143 »
Կաշուեղէն	2,616,533 »
Բուրդ	2,285,009 »
Գորգեր	2,124,631 »

Մենք զուրկ ենք հնարաւորութիւնից որոշելու՝ թէ մեր Կովկասի սահմանում գտնված մաքսատները որ աստիճան են մասնակցել պարսկական առևտրին (որին մասնակցում են Աստրախանը, Աստարան, Կրասնովօդսկը և առաւել Ասխաբադը)։ Բայց դատելով 1903, 1904, 1905 թւերի մեր ձեռքի տակ գտնվող ռուս պաշտօնական աղբիւրից (տես «Ежегодникъ Минист. Финансовъ» 1906/7 г.), նա պիտի որ կազմի բոլոր առևտրի 3/4-ը։

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Լոնդոն, 23 մայիս (Ն. տ.)

Հեռ. գործ.-ը արդէն հաղորդած կը լինի թէ՝ Անգլիոյ Թագաւորը յաջորդ ամսուայ սկիզբները պաշտօնական այցելութիւն մը պիտի տայ ցարին, և թէ՝ երկու միապետները պիտի տեսակցին Ռեվել՝ իբրև ջերմ բարեկամներ և ազգակիցներ։ Սա, անշուշտ, եզական դէպք մըն է, որովհետև գահ բարձրանալէն ի վեր դեռ ևս պաշտօնական այցելութիւն մը տուած չէր Էդուարդ Ռուսաստանի կայսեր, թէպէտև քանի-քանի տարաձայնութիւններ եղած էին այդ մասին զանազան ժամանակներ։ Երկու առթիւ, գոնէ, շատ քանացի պատճառներ կային այսպիսի այցելութեան մը յետաձգման համար։—Նախ ռուս-ճապօնական պատերազմը և ապա Ռուսաստանի ներքին դժընդակ վիճակը՝ որ անգլիացի գիտակից հասարակութեան հոգին ատով ու նողկանքով պաշարած էր ընդդէմ այդ սարսափները յառաջացնող ռէժիմին։

Տեղւոյս շարք մը թերթերու թղթակիցներէն իմացանք, թէ ռուսական մամուլը աննուն ուրախութիւնով կը շնորհաւորէ այս այցելութիւնը և թէ ազատական «Рѣчь» ու համանման օրգաններ միաբերան են յետադէմ «Н. В.»-ի հետ՝ Էդուարդի այս խոհեմ քայլը գովելու մէջ։ Ռուսաստանցիք, ի հարկէ, աւելի լաւ գիտնալու են ռուս ազատամիտ մամուլին վերագրուած նոյն ընթացքը։ Ես այս անգամ կը փափաքիմ մեր կողմի դրութիւնը ներկայացնել իսկականօրէն։

Որքան որ գործը մամուլի արտայայտութեանց դառնենք, հոս, գոնէ, պատասխանը որոշ է։ Բացի ազատական «Daily News» թերթէն, բոլորն ալ «մեծ գոհունակութիւն» կը յայտնեն և կը գուշակեն թէ՝ ներկայ ամսոյս 25-ին Ֆալիէրի տեղս այցելութենէն վերջ Էդուարդի ցարին այցելութիւնը—մերձաւոր դաշնակիցը Ֆրանսայի—կը շեշտէ բրիտանական բարեխնամ արքային «խաղաղասէր» ձգտումը և իր «միջազգային խաղաղութեան կապ մը հաստատելու» տենչը։ Նոյն արմատական թերթեր, որոնք թոյն ու ծծումբ կը թափէին ցարի կառավարութեան գլխուն՝ շնորհիւ օրէ օր Ռուսաստանէն տեղացող զարհուրաբեր լուրերուն, մոռցած իրենց անգուգական մեռեալ լիդըրին պատմական անտարբերութիւնը՝ առաջին Դումային լուծման առաւօտ, սիրով կողջունեն այս այցելութիւնը, որովհետև ազատական մինիստր մը կայ արտաքին գործոց վրայ և պէտք չէ քննադատել ունէ ընթացք։

Սակայն «Daily News»-ի խմբագրական ընդարձակ յօդուածը, որի մի կտորը պիտի զետեղեմ հոս, կը ներկայացնէ Անգլիոյ իսկական ազատականութեան լուռ կարծիքը։

«Էդուարդ Թագաւորին՝ ցարին տալիք մօտակայ այցելութիւնը,—կը գրէ,—խառն զգացումով մը պիտի ընդունուի այս երկրին մէջ։ Ծայրայեղ կայսերականներուն (imperialist) համար այս ընթացքը շատ գովելի է։ Անոնց համար մեր արտաքին քաղաքականութիւնը լոկ պայքար մըն է՝ կնճռոտ խնդրեղ մը՝ դաշնակիցներ գրաւելու և հակառակորդներ կղզիացնելու, նկատի ունենալով մեր նիւթական շահերու ընդլայնումը միայն և մեր մրցակիցներուն շփոթումը։ Այդ տեսակէտով անոնց համար շատ բնական է, որ ազատական Բրիտանիոյ Թագաւորը այցելութիւն մը տայ յետադէմ Ռուսաստանի ինքնակալին, ինչպէս որ նոյնն էր Գերմանիոյ կայսերականներուն՝ երբ քայզերը Աբդիւլ Համիդին այցելութիւն մը կը շնորհէր ճիշդ հայկական կոտորածներէն յետոյ։ Մեր կողմանէ, զարմանք չենք ձևացներ մենք այս քայլին առթիւ, սակայն և այնպէս կը նկատենք զայն անհաւատարմութիւն մը՝ ռամկավարական աւանդութեանց հանդէպ։ Մենք քննադատեցինք անգլօ-ռուսական համաձայնութիւնը այն հիման վրայ՝ որ այսպիսի միակողմանի դաշինք մը բացատրելի էր միայն՝ երբ մեր արտաքին մինիստրութիւնը, զիջումներ ընելով Ասիա, Ռուսաստանի աջակցութիւնը գնել կը ջանար եւրոպական հարցերու մէջ։ Այս այցելութիւնը կը հաստատէ մեր ենթադրութիւնը»։

Մինաս Ցոլակ

ԲՈՂՈՔԻ ԺՈՂՈՎ

Բոսթոնի և շրջակայից հայերը ապրիլ 5, կիրակի իրիկուն, ազգ. ժողովարանը հաւաքուած էին բողոքելու քաղաքական ոճրագործութեան դէմ։ Ատենախօսները բացատրեցին ոճիրներուն գործած ահաւոր վնասները թէ հայկական դատին և թէ հայ կեանքին հաշուոյն և արդար զայրոյթ արտայայտեցին խօսքի ազատութիւնը բռնաբարողներու դէմ։ Ժողովը միաձայն հաւանութեամբ ընդունեց յետագայ որոշումները.

«Վերջերս աշխարհի զանազան կողմերը կատարուած են հայ քաղաքական սպանութիւնները, որոնք քաղաքակիրթ աշխարհի առջև հայկական դատը վնասել և նոյն ատեն հայ ժողովրդին մէջ ոճիրի ձգտում մը ստեղծել, երկպառակութեան, արիւնհեղութեան և եղբայրասպանութեան դէպքերը բազմապատկել կը սպառնան։

«Ազգին թշուառութիւնը, պատիւը և ապագան չմոռցող ոևէ հայու համար անկարելի է առանց յուզումի դիտել ներկայ չարիքը։

«Մենք՝ Բոսթոնի հայերս պատահած աս աղէտալի դէպքերուն հանդէպ կը յայտնենք մեր խորին ցաւն ու զայրոյթը։

«Կը յայտարարենք, թէ անհատի մը ըմբռնումը և կեանքը, ինչպէս նաև անոր խօսքի և խղճի ազատութիւնը անձեռնմխելի իրաւունքներն են և ոչ մէկ անհատ կամ կազմակերպութիւն իրաւունք ունի այն նուիրական սրբութիւնները բռնաբարելու։

«Կը հաւատանք, թէ հայ ազգի պատմական կոչումն է քաղաքակիրթ Արևմուտքի ազատութեան սկզբունքները իւրացնելով արևելեան կիսավայրենի ազգերը քաղաքական բարձրագոյն իդէալներու առաջնորդել։ Վայրենի ցեղերու վայել բարբարոսութեամբ գործուած աս սպանութիւնները դաւադրութիւններ են հայ ազգի պատմական ճակատագրին դէմ։

«Կը յայտարարենք, թէ մասնաւորապէս խօսքի ազատութեան բռնաբարումը, գրիչի մարդուն վրայ զէնք բարձրացնելը յարձակում մըն է հայ մտքի զարգացումին վրայ։ Երբ մտաւոր առաջնորդներ թոյլ տրուին որ միայն շողոքորթեն ու փառաբանեն, ան ատեն հայ ժողովուրդը ազատութեան անարժան ստրուկներու ջոլիր մը կը դառնայ։ Մենք կը բողոքենք աս ստորնացումին դէմ և կը պահանջենք, որ հայ գրագէտը, հայ խմբագիրը անբռնաբարելի իրաւունքն ունենայ իր ազգին հետ խօսելու ճշմարտութեան համարձակ լեզուով։

«Հայ ազգը ազատութեան սիրուն համար տարիներով չարչարուեր, հալածուեր և անհնարին զոհեր տալէ վերջ՝ այսօր կրկին տէրը իր արդար դատին, քաղաքակիրթ աշխարհի առջև դրած է իր ազատութեան անժխտելի պահանջը, աս պարագային ազատութեան տարրական սկզբունքներուն դէմ գործածուած աս ոճիրները հայկական դատին մահը նշանակեն։

«Մենք, յանուն տառապող հայրենիքի, յանուն ազատութեան նուիրագործուած սկզբունքներուն՝ որոնց ծառայելու նպատակով հիմնուած են հայ յեղ. կազմակերպութիւններ, կոչում կընենք բոլոր հայ կուսակցութիւններուն միանգամ ընդ միշտ ջնջել եղբայրասպան ոճրագործութեան արատը հայ յեղափոխութեան ճակատէն, և հաւատարիմ իրենց կոչումին և անուան, ժողովուրդը փոխանակ նոր աղէտներու և ստորնացումի ենթարկելու, հայ ապագան փրկելու աշխատիլ»։ («Կոչն.»)

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

◆ Դոքթ. Մ. Վարդազարեան, որ անցեալ ամսու վերջերը Կ. Պոլսոյ մէջ մեռաւ, 2000 ոսկւոյ գումար մը թողուցած է ազգին, պայմանաւ որ սոյն դրամին տոկոսը գործածուի աղքատ աղջիկներու ամուսնութեան ծախքերն հոգալու։

◆ Եգիպտոսի մէջ կազմուած հայ բարեգործական միութիւնը ասկէ քանի մը շաբաթ առաջ 300 եգիպտ. ոսկի ևս խրկած է Հայաստանի կարօտելոց։

◆ Վանի ամերիկեան վարժարանի միսիոնարը՝ դր. Րէյնօլդս՝ որ 35 տարիներէ ի վեր մեր ժողովրդեան նպաստելով թէ բարոյապէս և թէ նիւթապէս և ամեն նեղ պարագային օգնութեան հասնելով հանրութեան ինչպէս նախկին և վերջին սովերուն առթիւ հազարաւոր լիրաներ բերել տալով Ամերիկայէն և Եւրոպայէն, նոյնպէս 1896-ի տխուր դէպքերէն վերջ երկսեռ որբանոցներ հաստատելով հոն իր դիմած մարդասէր բարեբարներուն խրկած առատ նպաստներով, պատճառ եղած է շատերու բարոյական և ֆիզիկական վերապրումին և մտաւոր զարգացումին, ահա հակառակ իր թափած այս քրիստոնէական և մարդասիրական անկեղծ ջանքերուն՝ կիմանանք որ արտասահմանի թերթերէն ոմանց միջոցաւ ամբաստանուած է իբրև անհաւատարիմ մատակարարող մը իր ձեռք հասած նպաստներուն տեսակէտով, իբր թէ ջանալով անոնցմէ աւելի բողոքական շրջանակի աղքատներուն բաժին հանել, նաև գործածելով այն գումարներն իբրև դաւանական պրօպագանդայի արդիւնաւորութեան միջոց մը, և թէ այդ նպաստներէն մասնաւոր գումարներ տալով իր ձեռքի տակ գտնուած հասակաւոր որբերուն, զանոնք Ամերիկա գաղթելու կը յորդորէ եղեր։ («Կոչն.»)

◆ Սուլթանը Զատկի առթիւ 45,000 ղրշ. շնորհած է Պոլսի ազգ. պատրիարքարանին։

◆ Օրմանեան պատրիարքը Թիւրքահայ եկեղեցական կալուածներու սեփականութեան մասին նոր բացատրութեան գիր մը պատրաստած է, ներկայացնելու համար ձեռնհաս իշխանութեան։

◆ Պոլսի ազգ. հիւանդանոցի հոգաբարձութիւնը որոշած է 7—8 ձեռնհաս աղջիկներ և տիկիններ հրաւիրելով հիւանդապահութեան դասընթացք մը հաստատել, գործնականին և տեսականին մէջ միանգամայն վարժեցնելով անոնք, որ քիչ քիչ այր հիւանդապահներու տեղը պիտի գրաւեն աւելի ձեռնհասօրէն։

◆ Մարաշէն հանրագրութիւն մը խրկուած է Պոլսի պատրիարքարանը, որով պատճառաբանելով թեմի եկեղեցական-կրթական գործերու անկերպարան վիճակը, ժողովուրդին մէկ մասը որոշած է դիմել Անտիոքի յունաց պատրիարքին՝ յունադաւանութիւն ընդունելու համար։ Պատրիարքը այս հանրագրութիւնը խրկած է Կիլիկիոյ կաթողիկոսին, այդ առթիւ պէտք եղած միջոցները ձեռք առնելու համար։ («Հայր.»)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

19 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դումայական մասնաժողովը բանուորական հարցի վերաբերութեամբ սկզբունքով ընդունեց, որ առևտրական հաստատութիւնների ծառայողների բանուորական օրը պէտք է զուգադիպվի այդ հաստատութիւնների բացման և փակման ժամանակի հետ։ Բացառութիւն կարող են կազմել օրինակ կայարանների և նաւային բուֆէտները, լողարանները և այլն։

Կոնսէրվատորիայի մեծ դահլիճում բացվեց միջազգային 11-րդ նաւագնացների կոնգրէսը։ Եկել են մօտ 3000 պատգամաւորներ Եւրոպայի և Ամերիկայի համարեա բոլոր պետութիւններից։ Բացմանը ներկայ էին շատ բարձրաստիճան անձնաւորութիւններ։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ։ «Ֆրանցեա» հիւրանոցում, երկու եկողների սենեակում ռումբ պայթեց։ Խուզարկութեան ժամանակ գտնվեց մի դժոխային մեքենայ պայուսակի մէջ։

ՎԱՐՇԱՎԱ։ Առաւօտեան ժամանեցին սլաւօն գործիչները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Առևտրի մինիստրութիւնը բորսային կոմիտէտներին մի հրահանգիր է ուղարկել, որով տեղեկացնում է, որ Հիւսիս. Ամերիկայի Միացեալ Նահանգների կառավարութիւնը համաձայնեց, ռուսաց ապրանքները Նահանգները ներմուծելու ժամանակ, այդ ապրանքների արժէքը որոշելու համար, ընդունել այն վկայականները, որ կը տան ռուսական բորսային կոմիտէտները։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՁԻԿՕՎԱՆԻ—9^{1}/$_{2}$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1^{1}/$_{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1^{1}/$_{2}$—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12^{1}/$_{2}$ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Ե. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարք 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Մեկնեց կովկասեան հանքային ջրերը և անցեալ տարիների նման ընդունելու է հիւանդներին վեներական և մորթու ցաւերով Կիսլօվօդսկում, հիւրանոց «Րօսսիա»։
(ա. օ.) 100—56

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
վերսկսեց ընդունելութիւն
Ներքին եւ Ջղային
Հիւանդների
Պեատիգօրսկում, Վերխի բուլվար № 14. տ. իշխ. Գիրէյի, Пятигорскъ, Верхній бульваръ, д. кн. Гирей. 30—6

ՀՐԱՒԷՐ
Զգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցու հոգաբարձութիւնը հրաւիրում է յարգելի ծխականներին շնորհ բերել մայիսի 25-ին, ժամը 12-ին, պատարագից յետոյ, ընդհանուր ծխական ժողովի՝
1) քննելու հոգաբարձութեան հրաժարական շարժառիթը.
2) ընտրելու 4 նոր հոգաբարձուներ՝ Փոխարքայից տրված ժամանակաւոր կանոնների 3-դ կէտի համաձայն։
(Հ. Կ.) 2—1

Մի այրի կին
(Ջօկ, Զամանանց հարս),
որը ունի 2 երեխայ, ինքը շատ տկար և թշուառ վիճակի մէջ է, խնդրում է բարեբար անձանց օգնել իրան մինչև իր առողջանալը, որպէսզի այնուհետև հնարաւորութիւն ունենայ աշխատել և պահել իր զաւակներին, ինչպէս մինչև այժմ։ Նպաստը ուղղել՝ Елизаветинская ул. № 48. Լ. Պ.-ին կամ «Մշակի» խմբագրատունը։
(Հ. ու. Կ.) 3—1

Լոյս տեսաւ
ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
№ 1.
Հրատարակութիւն Գ. ՄԻՐԱՂԵԱՆԻ
ՍԻԲԻՐԱԿԱՆ
Կօմ. 4 գործողութեամբ
Ա. Ցագարելու
Հեղինակի պատկերով, կենսագրութեամբ և յառաջաբանով։
Գինն է 50 կոպ.
Դիմել գրախանութներին կամ հրատարակչին—Ներսիսեան դպրոց։
Հրատարակչից գումարով պահանջողներին 20 % զիջում։
Ապառիկ ոչ ոքի չէ ուղարկվում։
(Հ. ու. Կ.) 4—2

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“
Գրախանութում վաճառվում են.

«Կաթողիկոսութիւնք Հայոց», Ա. Երիցեանի, 2 հատոր . .	4—50
«Բանաստեղծութիւններ», Յ. Յովհաննիսեանի . . .	1—50
«Ծիծաղաբեր», Խ. Խաչատրեանի .	— 20
«Մարդու ծագումը», Թարգմ. Նիկ. Սարգսեանի . . .	— 40
«Ռուսերէնից հայերէն բառարան», Յ. Դաղբաշեանի . . .	8 —
Նոյնը կազմած . . .	9 —
«Ռուս.-հայերէն բառ.» Յ. Թումեան.	— 75
Նոյնը կազմած . . .	1—1
«Համով-Հոտով», Սրուանձտեանի .	1—25
«Փուչ Զաւակ», Գ. Ղարաջեանի .	1—50
«Ի՞նչ է հարկաւոր գիւղին», Ս. Լալայեանի	1 —
«Զուռնա-Տմբլա», Տմբլաչի Խաչանի 2 հատոր	1—25
«Վշտի Ծիծաղ», Առանձարի .	1 —
«Քերթուածքներ», Արշ. Չօպանեանի	2 —
«Մի կեանք», Մօպասանի, Թարգմ. Ս. Տէր-Անանեանի, Տօլստոյի յառաջաբանով . . .	1 —
«Ազատութեան ճանապարհին», Ա. Ահարոնեանի . . .	— 80
«Արցունքի հովիտը», Ա. Ահարոն.	— 35
«Սօնայի նշանդրէքը», Յ. [illegible]	— 15
«Գէօթէ, Ֆաուստ», Թարգմ. Գ. Բարխուդարեանի . . .	2 —
«Առձեռն բառարան հայերէնից հայերէն», կազմած . . .	4—60
«Միքայէլ Նալբանդեանի երկերը», 2 հատոր	3 —
«Դէպի Արարատ», Ա. Մխիթարեանի	— 40

Նոյն տեղը վաճառվում են «Յառաջ»ի գրադարանի, «Կուլտուրական ընկ.», «Բանուորական գրադար.» և «Կեանք»ի գրադարանի հրատարակութիւնները։ Գումարով գնողներին բաւարար զեղչ։
Դիմել՝ Тифлисъ. книжный магазинъ „Гуттенбергъ“, Г. И. Галустяну.
2—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻՆ
մեկնեց Պեատիգօրսկ (Կովկ. հանք. ջրերը)։
Հասցէն՝ Верхній бульваръ д. кн. Гирей.
10—8

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵԱՆՔ
Հասարակական, գրական, արուեստական
Պատկերազարդ շաբաթաթերթի
(Ներկայ կուսակցութիւններից անկախ)
ԼՈՅՍ ՏԵՍԱՆ №№ 1 և 2
Բովանդակութիւն. № 1—Գրչի զինւորը «յեղափոխական» գնդակի զոհ.—Հայ եկեղեցին.—Մեր բարքերից.—Երգիր, մեռեր ջան, զուլումի երգեր.—Գրողի վիճակը.—Էն խրոխտալէ ժպիտը դէմքին.—Մի առաջարկութիւն բոլոր հայ թերթերին.—Կոչ կոչումը.—Ջօինները Ծայրարարութիւն։ № 2—Հայկական հարցը գրականութեան մէջ.—Մամուլ.—Փոստարկղ.—Յայտարարութիւն։ № 2—Հայկական յեղափոխութիւնը և «քաղաքակրթված» Եւրոպան.—«Բեալլագեօզ» ազգասիրական իսկական կրթութիւնը.—Մեր այժմեան հոգևորականութիւնը.—«Գործ ենք պահանջում.—Լէօի յոբելեանը.—«Հովիւը» և նրա խմբագրի յոբելեանը.—Մամուլ.—Մատենախօսական.—Գրական մի կենդան նահատակ (Տիգրան Նազարեան).—Մեր պատասխանը պ. Լէօին.—Մեր պատկերները. Լէօ, Երվանդ Երզնկեան, Տ. Նազարեան (նրանց յոբելեանի առիթով)։ № 3-ը լոյս է տեսնելու յուլիսի 1-ին։ Բաժանորդագինը ամեն տեղ 3 րուբլի, կէս տարվանը՝ 2 րուբ., հատը 8 կ.։ Դիմել՝ Тифлисъ, редакція „Граканутюнъ евъ Кянкъ“, Абасъ-Абадская площадь, Мугнинскій 1-й тупикъ, домъ Ахвердова № 5. «Զարկի» բաժանորդներից ճիշտ հասցէն յայտնողները՝ կը ստանան թերթը ձրի։
Խմբագիր-հրատարակիչ՝
Գրիգոր Բալասանեան
5—1

ԹԻՖԼԻՍԻ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ցանկանալով ամառվայ ամիսներում բանալ իր արհեստանոցի ճիւղը
ԳԻՒՂԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻՑ ՄԷԿՈՒՄ
դիմում է հասարակութեանը, խնդրելով դրամական աջակցութիւն այդ գիտաւորութիւնը իրագործելու համար։
Նպաստները հասցնել տնայնագործական ընկերութեան վարչութեան կամ «Մշակի» խմբագրութեան։

Типографія „Экономія“ Авака Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская ул. № 3.